

Մարտ ամիսը Հայ ժողովրդի պատմության մեջ

1 մարտ

1867 Թիֆլիսում ծնվեց Նար-Դուրը (Միքայել Յովհաննիսյան): (Վախճ. 1933թ.-ին):

1901 Արևմտյան Հայաստանի Պախլանց գյուղում ծնվեց արվեստի վաստակավոր գործիչ, բանաստեղծ Սարմենը (Արմենակ Սարգսյան): Նրա բանաստեղծությունների հիման վրա ստեղծվել են բազմաթիվ սիրված երգեր:

1934 Երևանում վախճանվեց հայ ճարտարապետության պատմության նշանավոր հետազոտող Թորոս Թորամանյանը:

2 մարտ

1902 Ստեփան Շահումյանը գլխավորեց Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողության խոշոր դասադուլը, որի պատճառով հեռացվեց ինստիտուտից և արտաքսվեց:

1917 Բուլժուական ժամանակավոր կառավարության ստեղծումը Ռուսաստանում:

1931 Ծնվեց գերմանացի արևելագետ, հայագետ Ալֆրեդ Գուտշմիդը: Նրա ուսումնասիրությունները նվիրված են խորեմացու և Ազաթանգ եղոսի աղբյուրագիտական քննությանը:

1981 Գործարկվեց Երևանի մետրոպոլիտենի առաջին երթը: Այժմ ստորգետնյա փոխադրանին ձգվում է 12 կմ ուղեծրով և ունի 10 կայարան:

1992 Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի անդամ:

3 մարտ

1842 Թիֆլիսում ծնվեց հայ մեծ բարերար, խոշոր նավթարդյունաբերող Ալեքսանդր Մանթաշյանը: Հովանավորել է Էջմիածնի Մայր տաճարին, հիմնել է կրթօջախներ Պոլսում, Թիֆլիսում, Կարինում և այլուր, կառուցել Ներսիսյան դպրոցի նոր շենքը:

1872 Վանում հիմնվեց «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերությունը:

1878 Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը, որը թե Ռուսաստանի, թե Հայաստանի համար շահավետ էր, բայց մի քանի ամիս անց, Բեռլինի կոնգրեսում, պայմանագիրը վերանայվեց, և կրկին հայկական հողերի զգալի մասն անցավ Թուրքիային:

1905 Սկսվեցին հայ թաթարական կռիվները:

1918 Ստորագրվեց Բրեստի պայմանագիրը:

1935 Ծնվել է անվանի արձակագիր Հրանտ Մաթևոսյանը:

1943 Հայրենական Մեծ պատերազմի օրերին լույս տեսավ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի առաջին հատորը, որը միանգամից խլվեց ձեռքից ձեռք:

1953 Բացվեց հայոց հին ձեռագրերի ամենամեծ պահոցը՝ Մատենադարանը (ճարտարապետ՝ Սարկ Գրիգորյան): Մատենադարանի ֆոնդերում պահվում են 13 հազարից ավելի կտոր հին ձեռագրեր և 100 հազարից ավելի արխիվային փաստաթղթեր:

1955 ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Հովհաննես Իսակովին շնորհվում է խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում և հանձնվում է «Մարշալական աստղ» տարբերանշան:

1958 ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդի որոշմամբ Մատենադարանը վերակազմվում է գիտահետազոտական ինստիտուտի:

4 մարտ

1878 Ծնվեց ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը: (Վախճ. 1936թ.-ին):

1922 Հայաստանի ժողովուրդին ընդունեց դեկրետ հայոց լեզվի նոր ուղղագրության մասին:

5 մարտ

1862 Կալկաթայում Տեր Հարությունյանը սկսեց հրատարակել «Եղբայրասեր» լրագիրը (մինչև 1863 թ.):

1920 Կիլիկիայի Հաճըն քաղաքում կազմակերպեց քաղաքի պաշտպանների զորահանդես: Ինքնապաշտպանության 4 վաշտերը թշնամուն դիմակայեցին մինչև հոկտեմբերի կեսերը: Հաճընի հերոսամարտը մեր ազգային պայքարի փայլուն էջերից է:

1959 Ծնվեց Վազգ Են Սարգսյանը՝ արցախյան ազատամարտի առաջին կազմակերպիչներից մեկը: Նա 1999 թ. հունիսից Հայաստանի Հանրապետության վարչապետն էր: Վարչապետը զոհվեց նույն թվականի հոկտեմբերի 27-ին, Ազգային ժողովում կատարված ահաբեկչության հետևանքով:

6 մարտ

1905 Մահացավ երաժշտագետ և կոմպոզիտոր Մակար Եկմալյանը: (Ծնվ. 1856 թ.):

1974 ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Հանձնաժողովը քննարկումների ընթացքում 1915-ի Մեծ եղեռնը բնութագրեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն:

7 մարտ

1923 Երևանի պետատրոնում բեմադրվեց Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան՝ հեղինակի ղեկավարությամբ:

8 մարտ

Կանանց, մայրության և գեղեցկության օր

1878 Հայկական պատվիրակությունը Սկրտիչ խրիմյանի գլխավորությամբ Կ. Պոլսից մեկնեց Բեռլին՝ հայկական հարցը Բեռլինի կոնգրեսին ներկայացնելու համար:

1911 Ծնվեց կոմպոզիտոր Ալան Վանես Չակմաքչյանը (Ալան Յովհաննես): (Վախճ. 2000 թ.-ին):

1919 Հրապարակվեց սուլթան Մահմեդ 6-րդ Վահիդետտինի կայսերական հրովարտակը՝ երիտթուրքական կառավարության ղեկավարներին և «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներին դատելու մասին:

1956 Մահացավ Դրոն (Դրաստամատ Կանայանը): (Ծնվ. 1884թ.):

1975 ՄԱԿ-ը մարտի 8-ը պաշտոնապես հայտարարեց կանանց միջազգային օր: Հանաշխարհային հանրությունն այդ տոնը նշում էր 1910 թվականից:

10 մարտ

1848 Խոշաբի կիսաանկախ իշխանության վերացումը:

11 մարտ

1836 Նիկոլայ I-ը վավերացնում է Ռուսաստանի հայ լուսավորչական եկեղեցու կանոնադրությունը «Պոլոժենիե»:

1955 ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ընդունվեցին Միության մարշալի կոչումը:

1992 Հայկական ինքնապաշտպանական ուժերի հերոսական ջանքերի շնորհիվ ձախողվեց Ղարաչինարի ուղղությամբ ռուս-ադրբեջանական ուժերի ներխուժումը ԼՂՀ Շահումյանի շրջան:

12 մարտ

1918 Թուրքական բանակը գրավում է Կարինը (Էրզրում):

1965 Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենում խորհրդային Հայաստանի հայրենադարձ հայերի հանրապետական հավաք:

13 մարտ

1897 Կարսում ծնվեց հայ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ և քննադատ Եղիշե Զարենցը: (Վախճ. 1937թ.-ին):

1899 «Դիսքավերի» տիեզերանավով տիեզերք բարձրացավ առաջին հայը՝ բժշկական գիտությունների դոկտոր Զեյնա Բալյանը:

15 մարտ

1891 Մահացավ գրագիր Խաչատուր Միսակյանը:

1921 Սողոմոն Թեխլիրյանը Բեռլինում տապալեց Թալեթ Փաշային, հայկական ցեղասպանության հիմնական ոճրագործին:

16 մարտ

1828 Սկսվեց պարսկահայության գաղթը Արևելյան Հայաստան: Գեներալ Լազարևի ղեկավարությամբ մարտյան այս օրը հայրենիքի ճանապարհը բռնեց հայերի 40 հազարանոց քարավանը:

1845 Ծնվեց բանասեր Նորայր Բյուզանդը:

1849 Ծնվեց գերմանացի լեզվաբան - հնդեվրոպագետ Կարլ Բրուգմանը: Մեծ դեր է խաղացել հայերենի իբրև հնդեվրոպական լեզուների անկախ ճյուղ ճանաչելու գործում:

1866 Ծնվեց հոգևորական գործիչ, բանասեր Ներսես Մելիք - Թանգյանը: Եղել է Ատրպատականի հոգևոր թեմի առաջնորդը, հրապարակել է հայագիտական և եկեղեցական իրավունքի աշխատություններ:

1913 Ծնվեց բանասեր, ակադեմիկոս, լեզվաբան Էդուարդ Աղայանը:

1917 Թիֆլիսում հայ կադետների կողմից ստեղծվեց լիբերալ-բուրժուական հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ -Գ): 1921 թվականի հոկտեմբերին, արդեն արտասահման տեղափոխված ՀԺԿ-ն դարձավ ռամկավար ազատական կուսակցության հիմնադիրներից մեկը:

1921 Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվեց պայմանագիր (Մոսկվայի պայմանագիրը): Նախիջևանը և Արցախը առանց Հայաստանի միջամտության և առանց հիմնավորման մտան Խորհրդային Ադրբեջանի կազմում:

1944 ՀԽՍՀ Գերագույն խորհրդի սեսիան որոշում է ընդունում ՀԽՍՀ պաշտպանության և ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատներ կազմակերպելու մասին:

1995 Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության նախագահները ստորագրեցին պայմանագիր Հայաստանի տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի վերաբերյալ:

17 մարտ

1863 Թուրքական կառավարությունը խիստ կրճատումներով վավերացրեց 1860 թ. մայիսի 24-ի «Ազգային Սահմանադրությունը»:

1865 Նախիջևանի Աստապատ գյուղում ծնվեց լեզվաբան, գրականագետ, պրոֆեսոր Մանուկ Աբեղյանը: (Վախճ. 1944 թ.-ին):

18 մարտ

1940 Երևանի կարբիդի գործարանի հիմքի վրա, ստեղծվեց Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանը՝ ներկայիս «Նաիրիտը»:

1944 Մարտաշարք է մտնում «Սասունցի Դավիթ» տանկային շարայունը, որը կառուցվել էր արտասահմանյան հայերի հավաքած միջոցներով:

1949 Երևանում սկսեց երթևեկել առաջին տրոլեյբուսը:

20 մարտ

1857 Ծնվեց հայ գուսանական երգ արվեստի սկզբնավորողներից, երգահան գուսան Շերանը (Գրիգոր Տալյան):

1860 Ախալցխայում ծնվեց հայ անվանի նկարիչ, թարգմանիչ և արվեստի տեսաբան Վարդգես Սուրենյանցը:

1876 Ծնվեց հայ լեզվաբան, բանաստեղծ Հրաչյա Աճառյանը: (Վախճ. 1953թ.-ին):

1887 Քուբայիսում ծնվեց խորհրդային ականավոր գիտնական Հովսեփ Օրբելին: (Վախճ. 1961թ.-ին):

1920 Ադրբեջանի գործերը հարձակվեցին Ղարաբաղի վրա:

1972 Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հայկական հեռագրական գործակալությունը վերակազմվեց պետական ինֆորմացիոն գործակալության Արմենպրեսի:

21 մարտ

1763 Վախճանվեց հայոց կաթողիկոս, 18-րդ դարի ազատագրական շարժման գործիչ Հակոբ Հինգ երորդ Շամախեցին: Ծննդյան թիվն անհայտ է:

1828 Նիկոլայ Լ-ի հրամանագրով իրը Հայկական մարզ կազմակերպելու մասին: Մարզի վարչության պետ է նշանակվում գեներալ-մայոր Ա. Ճավճավաձեն:

1981 Գործարկվեց Արփա-Սևան ջրատարը:

22 մարտ

1915 Սկսվեց հուլիզադների փոխանակումը Ռուսաստանի արտգործնախարարության և Պետրոգրադի անգլիական ու ֆրանսիական դեսպանությունների միջև: Շուրջ մեկ ամսվա ընթացքում երեք պետությունները կնքեցին գաղտնի համաձայնագիր դաշնակիցների հաղթանակից հետո Թուրքիայի սեծոկյան նեղուցները և Ստամբուլը ռուսական կայսրությանը միացնելու մասին: Համաձայնագրում ոչ մի խոսք չկար Արևմտյան Հայաստանի մասին:

1925 Կոմունիստական կուսակցության Անդրերկրյունի քարտուղար, Անդրժողովրդի ղեկավար, նախագահի տեղակալ Ալ. Մյասնիկյանի, Անդրկովկասի արտակարգ հանձնաժողովի (Չեկա) նախագահ Ս. Մոզիլսկու և ԽՍՀՄ փոստ-հեռագրական ժողովուհի ԱՍՖՍՀ լիազոր Գ. Աթաբեկյանի ողբերգական մահը:

23 մարտ

1898 Մահացավ հայ ականավոր երգահան, խմբավար և մանկավարժ Տիգրան Զուխաջյանը: (Ծնվ. 1836թ.-ին):

1923 Մոսկվայում վախճանվեց հայ բանաստեղծ, արձակագիր Հովհաննես Թումանյանը: (Ծնվ. 1869թ.-ին):

1929 Ծնվեց անվանի ծանրամարտիկ, աշխարհի բազմակի ռեկորդակիր, Ռաֆայել Զմյկյանը՝ միջազգային կարգի մրցավար, ԽՍՀՄ, Հելսինկիի օլիմպիական խաղերի և Եվրոպայի բազմակի չեմպիոն:

1937 Վերացվեց Անդրկովկասյան ֆեդերացիան:

1937 ՀԽՍՀ խորհուրդների IX արտակարգ համագումարը հաստատում է Հայկական ԽՍՀ Նոր սահմանադրությունը:

24 մարտ

1922 Բացվում է ՀԽՍՀ պետական բանկը:

1932 Ծնվեց աշխարհահռչակ բռնցքամարտիկ, Եվրոպայի աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոն, միջազգային կարգի մրցավար Վլադիմիր Ենգիբարյանը:

25 մարտ

1929 ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատը հաստատում է քրդական այբուբենը:

26 մարտ

1958 Մահացավ բանաստեղծ Ազատ Վշտունին: (Ծնվ. 1894 թ.):

27 մարտ

1902 Վախճանվեց Քրիստափոր Կարա-Մուրզան: (Ծնվ. 1853թ.-ին):

1993 Արցախի զինվորները հաջողությամբ հակազորհեցին Ադրբեջանի զինված ուժերի զարմանալի հարձակմանը՝ ազատելով Քելբաջարը և Ֆիզուլին:

28 մարտ

1923 Ծնվեց ԽՍՀՄ կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանյանը: Նրա ղեկավարած գնդի օդաչուները

Հայրենական պատերազմում խորտակել են 50-ից ավելի ֆաշիստական նավ, խփել 13 ինքնաթիռ: Անձամբ ինքը՝ Նելսոն Ստեփանյանը, կատարել է շուրջ 240 մարտական թռիչք: Ջոկովել է օդային մարտում, 1944 թվականին:

1928 Ծնվեց հանրապետության ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արա Հարությունյանը: Նրա ամենախոշոր ճարտարապետական - պլաստիկական կոթողը Սարդարապատի հուշահամալիրն է:

29 մարտ

554 Դվինում գունարված եկեղեցական ժողովը դատապարտում է քաղկեդոնական դավանանքը և վերջնականապես խզում իր կապերը բյուզանդական «տիեզերական» եկեղեցու հետ:

1001 Տրդատ ճարտարապետն ավարտեց Անիի մայր տաճարի կառուցումը:

1592 Ծնվեց հայ առաջին աշուղ-երգիչ Նահապետ Քուչակը:

1899 Կ. Պոլսում ծնվեց հայ մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանը: Մասնագիտությամբ ինժեներ-նավթագործ էր: Հիմնադրել է Թուրքիայի նավթային բարեգործական ընկերությունը: 1930 թվականին ընտրվել է հայկական բարեգործական ընկերության նախագահ: (Մահացել է 1955 թվականի հուլիսին, Լիսաբոնում:)

1912 Թիֆլիսում մահացավ հայ դասական դրամատուրգ իայի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանը: (Ծնվ. 1825թ.-ին):

1914 Թիֆլիսում հիմնվեց հայոց պատմական և հնագիտական ընկերությունը:

1992 Շուշիից և Ղայբալու, Ջանհասան, Քյոսալար գյուղերից Ստեփանակերտի վրա հարձակման անցած ադրբեջանական ուժերը կատաղի մարտերում ջախջախվեցին և ետ շարտվեցին ելման կետերը:

30 մարտ

1828 Հիմնվեց նոր Բայազետը, 1959 թվականից՝ Կանո, ներկայումս՝ Գավառ:

1909 Կ. Պոլսում գահընկեց եղավ Սուլթան Համիդը:

1935 Թիֆլիսում վախճանվեց ականավոր երգահան Ռոմանոս Մելիքյանը: (Ծնվ. 1883թ.-ին):

1998 ՀՀ նախագահական ընտրությունների 2-րդ փուլում Ռոբերտ Քոչարյանը ձայների 59 տոկոսով ընտրվեց հանրապետության նախագահ:

31 մարտ

1903 Ծնվեց աղբյուրագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը:

Լուրեր

Իրանահայ համայնք

- Սրբոց Վարդանանց տոնի առթիւ Թեմակալ առաջնորդը պատարագեց Սարդարապատ քաղաքամասի Ս. Վարդանանց եկեղեցում

Սրբոց Վարդանանց տոնի առթիվ հինգշաբթի, փետրվարի 27-ի առավոտյան ս. պատարագ մատուցվեց Թեհրանի Հայոց առաքելական բոլոր եկեղեցիներում, իսկ Թեհրանի Հեշմաթե քաղաքամասի Սրբոց Վարդանանց եկեղեցում մատուցվեց հանդիսավոր ս. պատարագ՝ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպիսկ. Սարգսյանի միջոցով, որին սպասարկում էին Ս. Կոմիտաս քին. Դարախանյանը եւ Ս. Արշեն քին. Հարությունյանը:

- Վարդանանց տոնախմբուֆիւմ՝ Հ. Ուս. «Չհարմահալ» միութիւնում

Թեհրանի Հ. Ուս. «Չհարմահալ» միության նախածեռնությամբ, նույն միութեան «Հ. Թունանյան» սրահում, տեղի ունեցավ ձեռնարկ՝ նվիրված Սրբոց Վարդանանց տոնին:

Իրան

- Իրանում ավարտվել է սպորտային մարմնամարզության միջազգային մրցաշարը

Իրանում ավարտվել է սպորտային մարմնամարզության միջազգային մրցաշարը: 9 երկրների 10 թիմերի պայքարում Հայաստանի տղամարդկանց հավաքականը նվաճել է հաղթողի կոչումը:

Մրցաշարի բացարձակ հաղթող է դարձել Վահագն Ստեփանյանը: Նա զուգափայտերի վրա եղել է առաջինը, մտույզի վրա՝ երկրորդը, ազատ վարժությունում էլ՝ երրորդը:

Հարություն Մերդինյանը պտտածողի եւ մտույզի վրա վարժությունները կատարելուց հետո կանգնել է պատվո հարթակի առաջին աստիճանին եւ բացարձակ առաջնությունում գրավել է երկրորդ տեղը: Արտյոն Ավետյանը հենացատկում եղել է առաջին, օղակների վրա՝ երկրորդը, բացարձակ առաջնությունում՝ երրորդը: Պատվո հարթակի բոլոր աստիճաններին կանգնել է նաեւ Գեորգ Դեւոնյանը: Նա ազատ վարժությունում գրավել է առաջին, զուգափայտերի վրա՝ երկրորդ, հենացատկում՝ երրորդ տեղը: Հաջող ելույթ են ունեցել նաեւ երիտասարդական մրցաշարի մասնակիցներ Դավիթ Ավետիսյանն ու Վահագն Դավթյանը: Հայաստանի մեծահասակների եւ երիտասարդական հավաքականներն ընդհանուր առմամբ նվաճել են 29 մեդալ, որից 14-ը ոսկե:

Հայաստան

- Ռոբերտ Քոչարեանը վերընտրեց ՀՀ նախագահ

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, 1864 ընտրական տեղամասերում ընտրություններին մասնակցել են 1,583,107

Հայաստանի քաղաքացիներ: Նախագահի թեկնածու Ստեփան Դեմիրճյանի օգտին տրվել է 499,288 ձայն, որը կազմել է 32.5%: Նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանին տրվել է 1,037,031 քվե՝ 67.5%:



- ՌԴ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՍԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈւՂԵՐՉ է ՀԳՆԵԼ ՀՀ ՎԵՐՆՏՐՎԱԾ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

ՄՈՍԿՎԱ, 6 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախագահական ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին շնորհավորել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը: Կրեմլի մամուլի ծառայության հաղորդմամբ, նա այդ առիթով շնորհավորական

հեռագիր է հղել ՀՀ վերընտրված նախագահին: «Ինձ համար մեծապես հաճելի է շնորհավորել Ձեզ Հայաստանի նախագահական ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ եւ ցանկանալ հետագա հաջողություններ այդ բարձր պետական պաշտոնում», մասնավորապես նշված է հեռագրում:

• **Ստ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

2003 թ. մարտի 5-ին նշանակված ՀՀ նախագահի ընտրությունների երկրորդ փուլը անցավ զանգվածային ընտրակեղծիքների, բռնաճնշումների և անարեկչության



մթնոլորտում: Գնահատելով ստեղծված իրավիճակը՝ հայտարարում ենք.

1. չենք ճանաչում ընտրությունների արդյունքները՝ արձանագրելով, որ ընտրությունների քողի տակ տեղի է ունեցել իշխանության բռնազավթում, եւ օրենքից դուրս գործող վարչախումբն իրավունք չունի հանդես գալ Հայաստանի եւ նրա քաղաքացիների անունից,
2. հասարակության հետ միասին հետեւողականորեն շարունակելու ենք պայքարը՝ Հայաստանում սահմանադրական կարգը վերականգնելու, օրինական իշխանություններ ձեւավորելու նպատակով,
3. պահանջում ենք Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ղեկավարվել ՀՀ ընտրական օրենսգրքով եւ որոշում ընդունել հանրապետության նախագահի ընտրությունն անվավեր ճանաչելու մասին,
4. մինչեւ նոր, օրինական ընտրությունների անցկացումն ու սահմանադրական կարգի վերականգնումը պայքարելու ենք ապօրինի ռեժիմի բռնաճնշումներից Հայաստանի քաղաքացիների իրավունքները պաշտպանելու համար:

• **ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ԴԻՍԷԼ Է ՄԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴՍՏՈՒՆ**

«Երկրորդ փուլը անցել է զանգվածային խախտումներով, բռնություններով, անարեկչություններով եւ արդյունքները որեւէ առնչություն չունեն ժողովրդի կատարած ընտրության հետ», Մամուլի ազգային ակումբում հրավիրած մամուլ ասուլիսում մարտի 5-ի գիշերը հայտարարածը կրկնեց ՀՀ նախագահի նախկին թեկնածու Ստեփան Դեմիրճյանը: Նա լրագրողներին հրավիրել էր հայտնելու «սահմանադրության շրջանակներում հանուն արդարության ու հաղթանակի» մինչեւ վերջ պայքարելու իր հաստատականության մասին: Նա տեղեկացրեց, որ նախընտրական շտաբում հսկայական նյութեր են կուտակվել կեղծարարությունների ու խախտումների վերաբերյալ: Իրենք արդեն դիմել են Սահմանադրական դատարան, իրենց իրավաբանները մտադիր են գործ հարուցել նաեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հանդեպ, որը նույնպես մասնակցել է խախտումներին: Նախկին թեկնածուի համոզմամբ, ընտրությունների երկրորդ փուլը իր բնույթով աննախադեպ էր, եւ ամեն ինչ ընթացավ նախապես ծրագրված սցենարով, ըստ հրահանգների: Նա ասաց, որ հոկտեմբերի 27-ից հետո էլ հրահանգավորում եղավ, թե մարդասպանները հիմն

են, եւ ով փորձում էր այլ բան ասել, անմիջապես մեղադրվում էր շահարկում անելու մեջ: Ս. Դեմիրճյանը նշեց, որ հանձնաժողովներում բռնություններ են իրականացվել իրենց վստահված անձանց նկատմամբ, բայց հեռուստաալիքները ցուցադրել են միայն Ս. Դեմիրճյանի կողմնակիցների խախտումները, որոնք խախտում անելուց հետո փախել են: «Եթե այդպիսի բան է եղել, բռնեք եւ պատժեք, ոչ թե ասեք, թե փախել են», ասում է Ս. Դեմիրճյանը:

Ստեփան Դեմիրճյանն ԱԳՀ դիտորդական առաքելության ընտրությունների երկրորդ փուլի գնահատականը «թողեց իրենց խղճին»: Նրանց հետ հասցրել էր հանդիպել միայն ընտրություններից առաջ: Իսկ լրագրողներից մեկի հարցին, թե իրենք ինչու են աշխատում միայն եվրոպական դիտորդների հետ, պատասխանեց, որ իրենք ոչ մեկի հետ չեն աշխատում, եւ եվրոպայի դիտորդներն իրենք են ամեն ինչ արձանագրել: Նրանց գնահատականները «պատիվ չեն բերում մեր երկրին», եւ ժողովրդի կամքի արհամարհումը կործանարար հետեւանքներ կունենա: Այդ հետեւանքները նվազագույնի հասցնելու համար իրենք շարունակելու են պայքարը «հանուն լեգիտիմ իշխանության», քանի որ Հայաստանին անհրաժեշտ է լեգիտիմ նախագահ, որն այդպիսին պիտի ընկալվի ժողովրդի գիտակցության մեջ, եւ վերջինս չպետք է տուժի իր իշխանությունների պատճառով: Ս. Դեմիրճյանը եվրոպացի դիտորդների գնահատականն օբյեկտիվ է համարում: «Իսկ ՅՈւ. Յարովը իր ասածի մեջ թող համոզի բռնության ենթարկված անձանց»:

Այն փաստը, որ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինն արդեն շնորհավորել է Ռ. Քոչարյանին՝ վերընտրվելու առթիվ, ՀԺԿականներին չի հուզում, եւ որեւէ ազդեցություն չի ունենա նրանց սկզբունքային մոտեցումների վրա:

Հանրահավաքներին հասարակության ակտիվ մասնակցությունը նախագահի նախկին թեկնածուն բացատրում է նրա «վիրավորված արժանապատվությամբ», քանի որ օրինական ընտրություններ չեն եղել, եթե այդպիսին լինեին, ինքն առաջինը կշնորհավորեր հաղթած թեկնածուին:

Ընտրությունների գիշերը ՀՀ նախագահի արած այն արտահայտությունը, թե «ընդդիմությունը 7 երգ ունի, 7-ն էլ խախտումների մասին է», Ս. Դեմիրճյանը վերադարձրեց այս տեսքով թող խախտումներ չանեն, մենք էլ չենք խոսի այդ մասին: Այն հարցին, թե իշխանությունների հետ բանակցելու որեւէ ուղի տեսնո՞ւմ է պարոն Դեմիրճյանը եւ չի՞ գտնում, որ հասարակության երկատվածության պայմաններում համագործակցությունն անհրաժեշտություն է, Ս. Դեմիրճյանը պատասխանեց. «Իշխանությունների հետ բանակցությունների եզր կլինի այն դեպքում, երբ պատժվեն ընտրությունների կեղծարարներն ու խախտողները: Իսկ անպատժելիության պատճառը հովանավորչությունն է»:

Խոսելով ընտրությունների օրվա մասին, Ս. Դեմիրճյանը պատմեց, որ նախընթաց օրը տեղամասային հանձնաժողովներից վտարել են ընդդիմության 100-ից ավելի ներկայացուցիչների, ընտրությունների օրը վտարել են վստահված անձանց: Նա կասկած հայտնեց նաեւ երկրորդ փուլին մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ:

Երկրորդ փուլը չբոյկոտելու իր որոշումը Ս. Դեմիրճյանը պատճառաբանեց այն հանգամանքով, թե մտավախություն է ունեցել, որ դա կդիտվեր իբրեւ նահանջ, եւ բացի այդ, ինքը հույս ուներ, որ քիչ թե շատ տանելի ընտրությունների դեպքում կհաղթեր: Այդուհանդերձ, չի զղջում, որ մասնակցել է երկրորդ փուլին: Իսկ թե ինչու (եթե ընտրակեղծիքներն ամխուսափելի էին) հենց առաջին փուլում Ռ.

Քոչարյանն այդ ճամփով միանգամից հաղթանակի չհասավ, Ս. Դեմիրճյանը բացատրում է հասարակության ճնշմամբ եւ դիտորդների եզրակացություններով (այդ երկու գործոնն այսօր էլ կան) եւ Ռ. Քոչարյանի երկրորդ փուլում համոզիչ հաղթանակ ապահովելու հեռահար ծրագրով: Բայց ամեն ինչ միայն երկրորդ փուլով չի ավարտվում: Իրենք շարունակելու են իրենց պայքարը: «Մենք հեղափոխական չենք, բայց սկզբունքային եւ հետեւողական ենք լինելու», վերջում կրկին հավաստիացրեց նա:

«Ազգ»

- **ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Ռիչարդ Բաուչերը Հայաստանի նախագահական ընտրության առիթով հանդես է եկել հայտարարությամբ**

ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Ռիչարդ Բաուչերը Հայաստանի նախագահական ընտրության առիթով այսօր հանդես է եկել հայտարարությամբ, որում, հիմնականում կրկնելով եվրոպական դիտորդների գնահատականները, մասնավորապես նշել է.

«Հայաստանի լիզերները բաց թողեցին վստահելի ընտրություն անցկացնելու միջոցով ժողովրդավարությունը զարգացնելու կարեւոր հնարավորություն:

Այդ իմաստով Ռիչարդ Բաուչերը դիմել է մեր երկրի եւ ընդդիմությանը եւ իշխանությանը. «Մենք կառավարությանը կոչ ենք անում դուրս գալ ժողովրդավարական Հայաստան կառուցելու ճանապարհ՝ սկսելով լիակատար եւ թափանցիկ ուսումնասիրել ընտրախախտումները,

պատա

սխանատվության ենթարկելով պատասխատու անձանց եւ ձեռնարկելով այլ քայլեր: Ընդդիմությանը կոչ ենք անում իրավական գործընթացների եւ խաղաղ բողոքարկման ճանապարհով հետամուտ լինել ընտրությանն առնչվող իրենց այն բողոքներին, որոնք հիմնավորված են: Հայաստանի բոլոր քաղաքական ուժերին կոչ ենք անում խուսափել հետընտրական բռնությունից եւ գործել Հայաստանի սահմանադրությանը համապատասխան», - ասել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակը: «Որպես դրական երեւույթ, մենք ողջունում ենք Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ կայացած հեռուստաբանավեճը, որը տեղի ունեցավ մարտի 3-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ ընդդիմության թեկնածու Ստեփան Դեմիրճյանի միջեւ, ինչպես նաեւ տեղական դիտորդների ներկայությունը տեղամասերի ավելի քան 50%-ում», - նշել է Բաուչերը:

- **ՔԱՅԱՆԱՅՈՒՅՆ ՀԱՎԱՔՆ ԵՎ ԻՎՐԱԾ ԴԵՎՈՆՂՅԱՆՑ ՏՈՒՒՆ**

Փետրվարի 25-ին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Սրբոց Դեւոնդյանց քահանայից տոնի առիթով տեղի ունեցավ քահանայական հավաք:

Վերջին տարիներին Հայաստանի ու Արցախի թեմակալ առաջնորդների եւ քահանայից դասի ավանդական դարձած այս հավաքը մի նոր առիթ էր անդրադառնալու եկեղեցականի առաքելությանն ու կոչմանը:

Օրվա բանախոսներ Տ. Տաթևի արք. Սարգսյանը եւ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանն իրենց ելույթներում անդրադարձան քահանայի հովվական, վարչական եւ ազգային պարտականություններին, ինչպես նաեւ եկեղեցական ծեսին իրրեւ քարոզչության եւ ավետարանչության հզոր միջոցի:

Մտքերի փոխանակության ընթացքում հոգեւորականներն արտահայտեցին իրենց

մտորումներն ու մտահոգություններն արծարծված խնդիրների վերաբերյալ:

Հավաքի ավարտին Վեհափառ հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց հոգեւոր դասին եւ հորդորեց, «հովվելով մեր ժողովրդին Քրիստոսի Ավետարանի լույս պատգամներով, «վասն Հիսուսի, վասն հայրենյաց» Վարդանանց խորհրդով՝ առավել նախանձախնդիր ծառայությամբ զորացնել հայրենական մեր կյանքը եւ պայծառացնել մեր եկեղեցին»:

ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Կայոց Սփյուռք

- **ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ Հ. ԳԱՍԱՐՃՅԱՆԸ ՄԵՂԱԴՐԵԼ Է ՀՅԴ-ԻՆ**

Լիբանանի խորհրդարանի հայ պատգամավոր Հակոբ Գասարճյանն անցյալ հինգշաբթի մեղադրել է ՀՅԴ-ի Հայ դատի կոմիտեին Փարիզում կազմակերպված «ՊրոնԱրմենիա» միջոցառմանը համայնքների բոլոր հայ պատգամավորներին չիրավիրելու համար, տեղեկացնում է էլ. փոստով ստացված հաղորդագրությունը: Նա ասել է, որ Հայ դատին նվիրված ցանկացած միջոցառում հաջողության չի կարող հասնել առանց բոլոր քաղաքական կուսակցությունների մասնակցության: Ցանկացած ուժ ստեղծվում է միասնականությամբ, իսկ այդ հանդիպմանը հինգի փոխարեն Լիբանանից հրավիրված է եղել միայն մեկ պատգամավոր՝ ՀՅԴ ներկայացուցիչ Սեպուհ Յովնանյանը: Գասարճյանը կոչ է արել Արամ Ա կաթողիկոսին, որի մասնակցությամբ է անցկացվել փարիզյան միջոցառումը, չհովանավորել դաշնակցականների «խտրականության քաղաքականությունը», իսկ կուսակցություններին միավորվել եւ պայքարել նման պառակտիչ երեւույթների դեմ:

Ի դեպ, փարիզյան միջոցառման կազմակերպման ձեւի մասին բողոքել են նաեւ Ջորյան ինստիտուտը, Կիպրոսի խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցիչ Պետրոս Գալայճյանը եւ ուրիշներ:

«Ազգ»

- **ՊՈՒՍԱՅԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԻՄԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԹՈՒՐԿԻԱՅԻ ԿԱՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ, ԵԹԵ...**

ՍՏԱՄԲՈՒԼ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Պոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոսը նամակով դիմել է ՆԳ նախարար Աբդուլքադիր Աքսո



լին անձ նազ րերի փոփ ոխմ ան ընթ ացք ում Թուր քիայ ի հայե ռի անձնագրերում «կրոնական պատկանելիության» մասում «այլ քրիստոնյա» ձեւով նշագրում չկատարելու պահանջով: Պատրիարքի ուղերձում շեշտվում է, որ նախկինում պոլսահայերի անձնագրերում նշվում էր միայն «քրիստոնյա», իսկ

«այլ քրիստոնյա» տարբերակը, որ գրվելու է ըստ նոր որոշման, դիտվում է որպես խտրականության դրսևորում եւ անհանգստության տեղիք է տալիս հայության շրջանակներում:

Թուրքական «Վաթան» ազգայնական թերթի հավաստմամբ, պոլսահայ համայնքը նշված հարցում մտադիր է հետեւողականորեն պայքարել սեփական իրավունքների համար: Պատրիարքի խորհրդարանական Մուրաթ Բերբերօղլուն նշում է, որ պահանջը չբավարարելու դեպքում կհետեւի դիմում Եվրոպայի մարդու իրավունքների դատարան: Այս նշումը Թուրքիայի իշխանությունները պայմանավորում են կրոնական ուղղությունը եւս որեւէ ձեւով արտահայտելու նպատակայնությամբ: Թուրքիայի ՆԳ նախարարությունը տեղեկացրել է թերթին, որ պատրիարքի ուղղերձը ստացվել է եւ ուսումնասիրման համար ուղարկվել համապատասխան վարչություն:

- **Թուրքիայի ՀԱՅԵՐԻ ԴԱՍՈՒՆ «ԱՅԼ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ» ՀԱՐՔՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՏԱՍԱՐ ՈՏՆԶՊՈՒԹՅՈՒՆ Է**

Փետրվարի 12-ին «Նոյյան տապան» գործակալությունը հաղորդագրությամբ մեր հասարակության ուշադրությունը հրավիրեց Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանի նամակին: Դա հասցեագրված էր Թուրքիայի ներքին գործերի նախարար Աբդուլբադի Աբսուլին: Դրանով պատրիարքը հայրը նախարարից պահանջում էր միջամտել, որպեսզի Թուրքիայի հայությունը նոր անձնագրեր ստանալիս դրա «կրոնական պատկանելություն» սյունակում «այլ քրիստոնյա» նշագրումը չկատարվի:

Մեսրոպ արքեպիսկոպոսը ուղերձի բնույթ կրող նամակում հիշեցնում էր, որ նախկինում թուրքահայերի անձնագրերում նշագրումները կատարվում էին միայն «քրիստոնյա» տարբերակով: Ինչ վերաբերում է «այլ քրիստոնյա» տարբերակին, որը նշագրվում է նոր օրենքի համաձայն, ապա դա, պատրիարքը հոր բնութագրմամբ, խտրականության դրսևորում է եւ անհանգստության տեղիք է տվել հայերի շրջանում: Պատրիարքին է հետեւել նրա խորհրդականը՝ նախագուլազացելով, որ պահանջը չբավարարելու դեպքում կոչվեն Եվրոպայի մարդու իրավունքների դատարան:

Ականա հարց է ծագում՝ ինչո՞վ է պայմանավորված «այլ քրիստոնյա» նշագրումից բխող մտահոգությունը: Մինչ հարցին անդրադառնալու ասենք, որ այս ձեւակերպման առնչությամբ պատրիարքից առաջ մտահոգություն էր հայտնել Ստանբուլում հրատարակվող «Ակօս» շաբաթաթերթը եւ պարզաբանումների պահանջով դիմում էր հղել Անկարա՝ անձնագրային վարչություն:

Վարչության պետը, ինչպես այդ մասին նշում է հունվարի 24-ի համարում «Ակօսը», թյուրիմացություն է համարել անձնագրով հայերին այլ քրիստոնյաների շարքում դասելը, ընդգծելով, որ այս նշագրումն օգտագործվել է նրանց նկատմամբ, ովքեր չեն պատկանում Թուրքիայում վաղուց ի վեր ճանաչված քրիստոնյա խմբավորումներին: Տվյալ դեպքում խոսքը պետք է վերաբերի հայերին եւ հույներին: Սակայն կա մի հանգամանք՝ անձնագրային վարչության պետի նախանշած թյուրիմացությունը չի ուղղվել: Այլապես «Ակօսի» նախագուլազացումից հետո Պոլսո հայոց պատրիարքը ներքին գործերի նախարարություն չէր դիմի:

Ուրեմն, Թուրքիայի հայությունն անձնագրերի փոխանակման ներկա փուլում գործ ունի միտումնավոր թյուրիմացության հետ: Դա, ամենայն

հավանականությամբ, բխում է Թուրքիայի հայերի ազգային իրավունքները ներքին կարգով սահմանափակելու կառավարական նկրտումներից: Պայմանով, որ սահմանափակումը չհակասի 1923 թ. հուլիսի 24-ին մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի եւ Ճապոնիայի միջեւ ստորագրված Լոզանի պայմանագրին:

Ինչպես հայտնի է, այս պայմանագիրը, ընդունելով հանդերձ Թուրքիայի տարածքային ամբողջականությունն ու պետական անկախությունը, երկրում բնակվող հայերին, հույներին եւ հրեաներին շնորհել է ազգային փոքրամասնության կարգավիճակ: Այլ կերպ հայերի եւ հույների կարգավիճակը նրանց տարբերակում էր Թուրքիայի ասորիներից, բուլղարներից, ինչպես նաեւ լեւանտինցիներից: Վերջիններս, չունենալով այդ կարգավիճակը, հայերի եւ հույների նկատմամբ «այլ քրիստոնյա» էին դառնում:

Դասել հայերին «այլ քրիստոնյաների» շարքը՝ ենթադրում է նրանց նույնացնել Թուրքիայում ազգային փոքրամասնության կարգավիճակից զուրկ կրոնական խմբավորումների հետ, որպեսզի այդ կարգավիճակն անտեսվի, եւ անտեսման պայմաններում թուրքահայերն իրենք դառնան կրոնական փոքրամասնություն հենց երկրի քրիստոնյաների մեջ: Քանի որ Թուրքիայի բնակչության 90 տոկոսը մահմեդական է, հետեւաբար քրիստոնյաներն արդեն փոքրամասնություն են:

Ուրեմն անձնագրում «այլ քրիստոնյա» նշագրումը հայերին փոքրամասնության մեջ փոքրամասնություն է դարձնում, ընդ որում կրոնական: Մինչդեռ Լոզանի պայմանագրի շնորհած ազգային փոքրամասնության կարգավիճակով նրանք ոչ միայն տարբերվել են այդ կարգավիճակից զուրկ քրիստոնյաներից, այլեւ որպես փոքրամասնություն են դիտարկվել երկրի թուրք բնակչության նկատմամբ:

ՀԱԿՈՐ ԶԱՔՐՅԱՆ

Սիջազգային

- **ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՆ ՈՇՆԶՍՅՎԵԼ Է**

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանին բռնակցված Նախիջեւանի մարզի տարածքում գտնվող Ջուղայի հայոց գերեզմանոցը՝ մոտ 3 հազար խաչքարերով, ոչնչացվել է: Այս մասին հայտարարեց Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հասարակական կազմակերպության նախագահ Սամվել Կարապետյանը Նախիջեւանահայոց ազգային խորհրդի փետրվարի 13-ի հավաքում:

Կարապետյանը տեղեկացրեց, որ առաջին ահազանգն այդ վանդալիզմի վերաբերյալ եղել է դեռեւս 1998թ., կազմակերպության Իրանի մասնաճյուղի անդամ Արմիհար Պետրոսյանի կողմից: Վերջինս Աբ. Ստեփանոս վանքը բարձրանալիս պատահաբար տեսել է, թե ինչպես են ադրբեջանցիները բուլդոզերներով քանդում եւ վազոնները լցնում խաչքարերը, եւ լուսանկարել է այդ ամենը: Իրանական սահմանի գրեթե նույն կետից դա լուսանկարել են նաեւ Հայ առաքելական եկեղեցու Ատրպատականի թեմի առաջնորդ Նշան Թովուզյանը եւ պարսիկ զինվորները: Վերջին լուսանկարում, որ արվել է 2002 թ. նոյեմբերի 25-ին «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության նախագահ Գեղամ Գեւորյանի կողմից, Ջուղայի գերեզմանոցն այլեւս չի երևում:

Ըստ ճանապարհորդ Ալեքսանդր Ռոդեսի տվյալների, 17-րդ դարում Հին Ջուղայի գերեզմանոցում եղել են շուրջ 10 հազար կանգուն, ամբողջական գեղաքանդակ խաչքարեր: 20-րդ դարի սկզբին

գերեզմանոցում արդեն մնացել էին շուրջ 5000 խաչքարեր, խոյածեւ տապանքարեր, ինչպես նաեւ 3 եկեղեցի եւ մատուռ: Կան տվյալներ, որ նույն վիճակում են նաեւ Նախիջեւանի տարածքի հայկական հարյուրավոր այլ հուշարձաններ, որոնք սակայն նկատելի չեն սահմանի մյուս կողմից: Ըստ ներկայների, Ջուղայի գերեզմանոցի պատմական եւ գեղարվեստական արժեքը բացառիկ է: Այն եզակի է հայկական մշակույթի համաման հուշարձանների շարքում եւ իր ուրույն տեղն ունի համաշխարհային քաղաքակրթության գանձարանում: Ուստի, մասնակիցները որոշեցին դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ին, ԻՎՈՄՈՍ-ին եւ մշակութային արժեքներով զբաղվող միջազգային այլ կազմակերպությունների, կոչ անելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո ստեղծել միջազգային հանձնախումբ Ադրբեջանի տարածքում գտնվող հայոց մշակութային հուշարձանների ոչնչացման փաստերը տեղում ուսումնասիրելու եւ Ջուղայի գերեզմանատունը պատմության եւ մշակույթի միջազգային չեզոք գոտի դարձնելու համար:

ՇՊԿԱՆՆԵՆ ՔԱՋԱԶՆՈՒՄՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ (4 ԵՒ ՎԵՐՋ)

ՃՐՈՒՅՑ ՇՊԿԱՆՆԵՆ ՔԱՋԱԶՆՈՒՄՈՒ ՇԵՍ
(«Խորհրդային Հայաստան», 1925թ., 23 հունվարի, N 17)

Շունվարի 19-ին Թիֆլիսից տեղ հասավ «Դաշնակցությունն անելիք չունի այլևս» գրքի հեղինակ եւ նախկին դաշնակցության նախագահ Յ. Քաջազունին: Արմենասի աշխատակցի այն հարցին, թե ի՞նչն է Ձեր Հայաստան գալու նպատակը քաղ. Քաջազունին պատասխանել է, ես շատ ջերմ ցանկություն ունեմ աշխատելու Հայաստանի շինարության մեջ իմ մասնագիտության ասպարեզում: Իր տպավորությունների մասին Խորհրդային երկրներից քաղ. Քաջազունին հայտնել է. «Պետք է ասեն, որ ընդհանուր առմամբ իմ տպավորությունները Խորհրդային երկրներից շատ լավ են, սրտապնդիչ: Մանրամասնորեն չեմ կարող իմ տպավորությունները հայտնել, որովհետեւ Ռումինիայում Խորհրդային թերթերի մուտքը խստիվ արգելված է, իսկ Թիֆլիսում ընդամենը մի ամիս եմ ապրել, ուր ամբողջովին զբաղված եմ եղել տարիներ շարունակ երեսնիվայր թաղված ընտանեկան գործերով»: Դառնալով արտասահմանի հայությանը՝ քաղ. Քաջազունին շարունակեց. «Ես հաստատապես կարող եմ ասել, որ ընդհանրապես արտասահմանի հայության վերաբերմունքը դեպի Խորհրդային իշխանությունը համակրական է: Սակայն Հայաստանին նյութական օժանդակություն ցույց տալու հարցում ես կազմել եմ այն դառը համոզումը, որ արտասահմանի հայությունն իրական օգնություն անել մեզ չի կարող: Գաղութահայերի մի ահագին մեծամասնությունը գաղթականներ են, որոնք օգնության կարիք ունեն եւ եթե ցանկանան էլ՝ ի վիճակի չեն որեւէ զոհողություն անել: Իսկ այն չնչին բարեկեցիկ մասն այնքան խորթացած է հայրենիքից, անենաչնչին հոգեկան պահանջ անգամ չունի որեւէ զոհաբերության: Սա իհարկե անկախ նրանից, թե ինչ պետական վիճակ է տիրում այստեղ՝ Խորհրդային, թե

մի այլ: Նրանց արտասանած բառերի մեջ օգնության կարելի է հանդիպել, իսկ գործնականում՝ բնավ: Մեկ ու կես տարի առաջ դուրս գալով Դաշնակցությունից՝ կուսակցական կապեր չունեմ նրա հետ, սակայն բավական վստահորեն կարող եմ հայտարարել, որ դաշնակցական զանգվածների մեջ ժխտողական կամ անհանդուրժող վերաբերմունք դեպի Խորհրդային իշխանություն չկա: Այդ կուսակցության ղեկավարի մեջ կա բացասական վերաբերմունք, որը սակայն շարունակվում է իներցիայի ուժով, բայց այդ վերաբերմունքն եւս տեղի է տալիս ավելի գիտակից ու խելացի վերաբերմունքի: Մի երեւույթ, որ ակնբախ կերպով նկատվում է գաղութահայության մեջ, դա ընդհանուր եւ շատ բուն ցանկությունն է Հայաստան վերադառնալ: Ես գիտեմ, որ եթե մի փոքր հնարավորություն լինի ներկա Հայաստանում, տասնյակ հազարավոր հայեր կվերադառնան: Սրա պատճառը ոչ միայն հայրամասիությունն է, այլ այն նյութական եւ քաղաքական անհանդուրժելի վիճակը, որի մեջ ապրում են փախստական հայերը: Այդ գաղթականների մեծագույն մասը, սակայն, իր սոցիալական էությանը Հայաստանի համար այնքան էլ օգտակար չէ: Նրա մի որոշ մասը, որ գյուղատնտեսությամբ է պարապում, գուցե պետք լինի Հայաստան բերել, իսկ լեւանգական քաղաքացիների բնակիչներ դառած եւ սոսկ առետրով պարապող հայերն օգուտ տալ չեն կարող Հայաստանին: Նրանցից արդեն բավականաչափ կան Հայաստանում եւ չարժե նրանց թիվը մեծացնել»:

ՄԱՍԿ Պետական համալսարան
N 1368 3 մարտի 1930թ.

ԸՆկ. Քաջազունուն

Հայտնում եմ Ձեզ ի գիտություն, որ Հայպետհամալսարանի վարչության ս.թ. փետրվարի 6-ի որոշումը՝ Ձեզ պրոֆեսորի կոչում տալու մասին, Լուսժողկոմատի կոլեգիայի ս.թ. փետրվարի 9-ի նիստի որոշմամբ (արձանագրություն N 9), հաստատված է: Տեղֆակի դեկան /Նավակատիկյան/ Քարտուղար /Շատվորյան/ ընտանեկան արխիվ

ՎԵՐՋ
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՍՈՒՐԲ
ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Ըստ Հայ առաքելական սուրբ եկեղեցու տոնացույցի, Մեծ պահքին նախորդող հինգշաբթի օրը Վարդանանց սուրբ նահատակների հիշատակի օրն է: 428 թ. Հայաստանում վերացվում է Արշակունյաց թագավորությունը: Հայաստանի պարսկական տիրապետությանն անցած մասը դառնում է մարզպանություն, եւ Վասակ Սյունին նշանակվում է մարզպան: Հենց այդ ժամանակ պարսից թագավոր Հազկերտն իր տերության սահմաններում բնակվող բոլոր հպատակներին ձգտում է գրադաշտական հավատի դարձնել եւ 449 թ. հրովարտակ է հրապարակում պարտադրելով գրադաշտական կրոնը (կրակապաշտությունը): Սակայն շատերը հրաժարվում են ընդունել արքայի աստվածուրացման այդ հրահանգը: Այդ ընթացքում հայ նախարարները

Համառոտ ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Էդ. Բաղդասարյան
(Էդ. Վերամտել)

(7)

(Շար. Նախորդ համարից)

ԵԿԵՂԵՑԻ

Իրանահայ համայնքի ներքին խնդիրների կարգավորումը հիմնված է կրոնակեղեցական ինքնավարության վրա, որն իրականացվում է գոյություն ունեցող թեմերի շրջանակներում: Մինչև XX դ. կեսը, Ի-ում եղել է երկու թեմ Ատրպատականի եւ Իրանա-հնդկական (Ճախկինում՝ Նոր Ջուղայի): 1944-ին կազմավորվել է Թեհրանի թեմը: Մինչև դարասկզբի սահմանադրության ընդունումը հայերը ճանաչվել են որպես ազգային փոքրամասնություն, նրանց իրավունքները պահպանվել են պարսից շահերի եւ այլ իշխողների հրովարտակներով: Մինչև XX դ. խկիզբը թեմերը միահեծան ղեկավարել են թեմակալ առաջնորդները, սակայն դարասկզբին համայնքի առաջադիմական ուժերի ճնշման տակ մշակվել եւ ընդունվել են թեմական կանոնադրություններ, որոնք սահմանափակել են առաջնորդների իշխանությունը: Ներկայումս համայնքի թեմերն իրենց գործունեությունն իրականացնում են հայ առաքելական եկեղեցու կանոնների ու ավանդույթների, իրենց կանոնադրությունների հիման վրա գործող վարչական մարմինների որոշումների համաձայն:

Իսլամական Սահմանադրության ընդունումից հետո հայերն ազգային մյուս փոքրամասնությունների նման հռչակվել են կրոնական փոքրամասնություն: Չնայած վաղուց ի վեր իրանահայ թեմերը պատության կողմից դիտվել են որպես ազգային-կրոնական հաստատություններ, միայն 1967-ին են դրանք պատանապետ ճանաչվել որպես կրոնա-մշակութային, բարեգործական ընկերություններ եւ իրավական մարմիններ:

Թեմական խորհուրդները կարգավորում են միայն Հայ Առաքելական եկեղեցու հետերորդների ներքին կյանքը: Հայ կաթոլիկներն ու բողոքականները ունեն իրենց եկեղեցիները եւ առաջնորդարանները: Թեհրանի հայ կաթոլիկե համայնքը ձեւավորվել է 1934-ին, ներկայումս ընդգրկում է մոտ 1200 հոգի: Այստեղ է գտնվում նրանց պատրիարքական փոխնորդությունն ու առաջնորդարանը: Իրանահայ կաթոլիկների մյուս կենտրոնը Թավրիզն է, որտեղ 1900-ին գործել է Լազարյան լատին միաբանության կազմակերպությունը: 1910-ից ունեն իրենց եկեղեցին (տեղի հայ կաթոլիկների թիվը հասնում է 100-ի):

Իրանահայ բողոքականների կենտրոնը նույնպես Թեհրանն է: Վարչական կառուցվածքով անկախ է, սակայն կցված է Ի-ի ավետարանական եկեղեցիների միությանը: 1950-ական թթ. սկզբից ունեն համայնքի ընտրովի խորհուրդ, որը տնօրինում է հանրային, կրթական, կրոնական եւ այլ հարցեր: Հայ բողոքականների թիվը Թեհրանում հասնում է 200-ի, ամբողջ երկրում 2500-ի: Մոտ 250 հոգուց բաղկացած համայնք գոյություն ունի նաեւ Նոր Ջուղայում, որտեղ կա նաեւ ժողովարան (1875-ից) եւ վեցամյա դպրոց: որոշակի թվով հայ Գալստականներ

սպարապետ Վարդան Մամիկոնյանի եւ կաթողիկոս Հովսեփ Հողոմեցու գլխավորությամբ Արտաշատում ժողով են գումարում ու Հազկերտին պատասխան գրում, որ երբեք ոչ ոք չի կարող հավատքը խախտել, եւ երկնքում Հիսուս Քրիստոսից բացի ուրիշ Աստված չկա: Պատասխանը խիստ զայրացնում է Հազկերտին, եւ նա, տասը մեծանուն նախարարների տանջանքների ենթարկելով, ստիպում է հրաժարվել քրիստոնեությունից:

Հայաստանում լսելով նախարարների ուրացման լուրը, ժողովուրդը ոտքի է կանգնում: 451 թ. գարնանը պարսկական զորքը, Վասակ Սյունին եւ համախոհ նախարարների գնդերը՝ թվով 200 հազար (հայկականից 3 անգամ ավելի), մտնում են Հայաստան, հասնում Արտազ գավառ՝ բանակ դնելով Տղմուտ գետի աջ ափին: Հայոց սպարապետ եւ զորագլուխ Վարդան Մամիկոնյանը քաջալերիչ խոսքերով խրախուսում է զորքին ու միաբանված նետվում ճակատամարտ: Մայիսի 26-ին սկսվում է ճակատամարտը: Ավարայրում հերոսաբար իր զինվորների հետ ընկնում է քաջ Վարդանը եւ նրա հետ 7 երեւելի նախարարներ՝ Արտակ Պալունին, Խորեն Խոռխոռունին, Հմայակ Դիմաքսյանը, Տաճատ Գնթունին, Վահան Գնունին, Արսեն Ընծայեցին, Գարեգին Սրվանձտյանը, ազնվականներ, ընդամենը՝ 296 հոգի: Նույն օրը, տարբեր վայրերում, կռվի ընթացքում զոհվում են 740 հոգի՝ նահատակների թիվը դարձնելով 1036:

Վարդանանց քաջերին Սբ. Ներսես Շնորհալի հայրապետը ձոնել է «Նորահրաշ» շարականը՝ յուրաքանչյուր տուն սկսելով մի նահատակ իշխանի անունով: Երանելի Վարդանը ոչ միայն բանակի զորագլուխ էր, այլեւ հավատի մարտիրոսների, ինքը պատկեր էր ուրիշների պատկերները առաջնորդը եղավ: Որքան քաջ էր թշնամուն սպանելիս Վարդան զորավարը, ավելի քաջ եղավ թշնամու ձեռքով մահն ընդունելիս: ճակատամարտին մասնակցել էին նաեւ հոգեւորականներ, ովքեր իրենց անմնացորդ ծառայությունը մատուցեցին հայ եկեղեցու, հավատքի եւ հայրենիքի պաշտպանությանը: Նրանց շարքերում էին Սուրբ Դեւոնդյանները, որոնց մարտիրոսությունը տեղի ունեցավ Վարդանանց նահատակությունից 3 տարի 2 ամիս հետո, բայց տոնացույցի մեջ սկզբում դրված է Դեւոնդյանց տոնը՝ իբրեւ Վարդանանց պատերազմի գաղափարախոս նախապատրաստողների:

Վարդանանց պատերազմից անցել են դարեր, բայց նրանք միշտ կենդանի են մեր հոգում: Եվ յուրաքանչյուր հայ պարտական է գլուխ խոնարհել նրանց հիշատակի առաջ: Վարդանանց խորհուրդը հավերժական է, պատմության քառուղիներում այն միշտ ուղեկցել է մեզ, եւ Վարդանանց ոգին է, որ այսօր էլ երաշխավոր է մեր գոյության ու հաղթանակների, մանավանդ այս նոր՝ 21-րդ դարում: Հիմա էլ մեր հոգեւոր հայրենիքը՝ մեր հավատը, մեր Տիրոջ երկնային վարդապետությունը Ավարայրի դաշտի է վերածվել օտարամուտ զանազան աղանդների Հայաստան ներխուժումից, որոնք ուզում են իրականություն դարձնել հազկերտյան հրովարտակը, բայց մենք, ինչպես ասել է եղիշեն, «մեզ հայր ենք ճանաչում սուրբ Ավետարանը, եւ մայր՝ Առաքելական կաթողիկե եկեղեցին, եւ թող ոչ ոք իբրեւ չար անջրպետ մեջ ընկնելով մեզ նրանից չբաժանի»:

Հայ առաքելական եկեղեցին ամեն տարի փետրվարի 27-ին հատուկ պատարագ է մատուցում 451 թ. Ավարայրի ճակատամարտում զոհվածների ու մարտիրոսացածների հիշատակին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՎԱՐՅԱՆ

(Շաբաթականներ) իրենց ժողովատեղիներով գտնվում են հարանում: Համեմատաբար փոքր թիվ են կազմում Իայ Ուղղափառները, Ռենիթորները, Կարմեոյանները եւ «եռոպայի վկաները»:

Հայ Առաքելական եկեղեցին Ի-ում ներկայումս ունի երեք թեմ՝ Ատրպատականի, Թեիրանի եւ Սպահանի:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄԸ հնագույնն է: Ընդգրկում է Ատրպատականի տարածքը (Արմ. եւ Արլ. Ադրբեջան նահանգներ): Ատրպատականում հայ առաքելական թեմերի մասին հիշատակություն կա դեռեւս XII դ.-ից: Մինչեւ 1833-ը թեմի կենտրոնը եղել է Արտազի (ներկայումս Մակու) Ս.Թեդեոս Առաքյալի վանքը: 1833-ին Նտրպատականի հայոց առաջնորդ Նիկողայոս Կարբեցի եպիսկոպոսը թեմի կենտրոնը տեղափոխել է Թավրիզ: Առաջնորդարանը տեղավորված է Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցու բակում: Մինչեւ 1956-ը ենթարկվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, այնուհետեւ՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: XX դ. խկզբին թեմի տարածքում բնակվել է ավելի քան 30 հզ. հայ, հետագայում հայրենադարձության հետեւանքով նրանց թիվը նվազել է եւ 1970-ական թթ. վերջին հասել 17 հզ.-ի:

Թեմի տարածքում կա շուրջ 180 եկեղեցի, որոնցից ներկայումս կանգուն են 40-ը: Նշանավոր են Արտազի Ս. Թադեոս Առաքյալի (VI-IX դդ.) եւ Ս. Ստեփանոս նախավկայի (VII-IX դդ.) վանքերը, Թավրիզի Ս. Աստվածածին) 1782 եւ Ս. Սարգիս (1845) եկեղեցիները, Սալմաստի գավառի Ղալասար գյուղի Ս. Սարգիս եկեղեցին (1806), Խոյի Ս. Սարգիս (1120) եկեղեցին, եւն: Թեմի բարձրագույն օրենսդիր մարմինը չորս տարով ընտրվող Թեմական պատգամավորական ժողովն է բաղկացած 17 անդամից: Պատգամավորական ժողովն ընտրվում է 7 հոգուց բաղկացած Թեմական խորհուրդը, որի նախագահը թեմակալ առաջնորդն է: 1967-ին Ատրպատականի Առաջնորդարանը եւ Թեմական խորհուրդը պաշտոնապես ճանաչվել են որպես կրոնամշակութային եւ բարեգործական ընկերություն եւ արձանագրվել «Ատրպատականի ընդհանուր հայության Առաջնորդարանի խորհուրդ» անունով: 1833-ին Թավրիզ տեղափոխվելուց ի վեր թեմի ամենանշանավոր առաջնորդը Ներսես Արքեպիսկոպոս Մելիք Թանգյանն էր (ղեկավարել է 1913-48-ին), այնուհետեւ առաջնորդի տեղապահ Բագրատ ավագ քահանա Մելքոնյանը: Ներկայումս (2000) թեմը գլխավորում է Նշան Ծ. Վարդապետ Թովուզյանը:

ՄՊԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԻՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԸ (մինչեւ 1960-ը՝ Իրանա-Հնդկաստանի Հայոց թեմ) իրանահայության հնագույն թեմերից է: Ստեղծվել է 1605 թ. Շահ Աբբասյան բռնագաղթի հետեւանքով: Նախապես կոչվել է *Սպահանի* կամ *Նոր Ջուղայի* թեմ: Ընդգրկել է Ի-ի ամբողջ տարածքը, բացառությամբ Ատրպատականի թեմի տարածքի: Հետագայում, երբ նրան են ենթարկվել Հնդկաստանի, Ճավայի եւ այլ հայկական համայնքներ, կոչվել է Իրանա-Հնդկաստանի թեմ: Մինչեւ 1944-ը Արաքը եւս նրա մասն է կազմել: 1944-ին նրանից անջատվել է Թեիրանի թեմը, իսկ 1958-ին Հնդկաստանն ու ծայրագույնը Արեւելքը, սակայն թեմը շարունակել է պաշտոնապես կոչվել Իրանա-Հնդկաստանի հայոց թեմ: Նույն ժամանակ (1945 թ.) էլ թեմը անջատվել է Ս. Էջմիածնից եւ անցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայությանը:

Թեմի հիմնադրման օրվանից առաջնորդական կենտրոնը գտնվում է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում: Առաջին առաջնորդը Մեսրոպ եպիսկոպոսն էր (1606-1620): XX դ. խկզբին մշակվել եւ ընդունվել է թեմական կանոնադրություն: 1923-ին կազմվել է Նոր Ջուղայի համայնական խորհուրդը, որը կրոնական խորհրդի եւ թեմակալ առաջնորդի հետ վարել է թեմի ներքին գործերը: 1930-ական թթ. սկզբից, ի տարբերություն Թեիրանի եւ Ատրպատականի թեմերի, հվ. շրջանների համայնքները իրենց վարչահասարակական գործունեությամբ դարձել են անկախ, չենթարկվելով Նոր Ջուղայի թեմին: Ներկայումս թեմի տարածքի բնակչությունը խիստ նոսրացել է. հայերը լքել են Լնջան, Ալինջան, Չարվանիս, Քյարվանդ գավառները: Թեմի ներկա վարչական սահմանների մեջ մտնում է Սպահանը (որի մեկ շրջանն է Նոր Ջուղան), Շահինջահ նորակառույց քաղաքը, Փերիայի գավառը, Շիրազն ու Խուզեստանը: Թեմի տարածքում կա ավելի քան 105 եկեղեցի, որոնցից կանգուն են 30-ը: Նշանավոր են Ս. Ամենափրկիչ վանքը (1655), Ս. Բեթղեհեն (1628), Ս. Գեուրգ (1611), Ս. Աստվածածին (1613), Ս. Ստեփանոս (1614), Ս. Սարգիս (1659) եւ Ս. Մինաս (1659) եկեղեցիները: Թեմի ներկայիս (2000 թ.) առաջնորդն է Կորյուն Արքեպիսկոպոս Պապյանը:

ԹԵՐՐԱՆԻ ԹԵՄԸ իրանահայության ամենաերիտասարդ թեմն է: Ստեղծվել է 1944-ին: Ընդգրկում է Թեիրանն իր շրջակայքով, Համադանը, Մաշհադը, Գորգանը, Սարին, Ռաշտը, Էնզելին, Ղազվինը, Արաքը եւ Քերմանշահը: 1940-ական թթ. կեսին թեմի բնակչության թիվը հասել է 45 հզ.-ի (որից 25 հզ.-ը բնակվել է Թեիրանում), իսկ 1970-ական թթ. վերջին անցել է 150 հզ.-ից (95% -ը բնակվել է Թեիրանում): 1956-ին Թեիրանի թեմը իրանահայության մյուս թեմերի նման անջատվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եւ անցել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայությանը: Առաջնորդարանը կառուցվել է 1970-ին Ս. Սարգիս եկեղեցուն կից: Թեիրանի թեմի առաջին առաջնորդը Վահան Տ. վարդապետ Կոստանյանն էր, նրան փոխարինել է Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը: Վերջերս մինչեւ 1999 թ. թեմի առաջնորդը Արտակ Արքեպիսկոպոս Մամուկյանն էր, որը միաժամանակ Ի-ի մեջ եկեղեցական խորհրդի նախագահն էր: Ներկայիս Առաջնորդն է Սեպուհ եպիսկոպոս Սարգսյանը: Ըստ թեմի կանոնադրության, թեմակալ առաջնորդն ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից՝ առանց պաշտոնավարության ժամկետը սահմանելու: Բարձրագույն օրենսդիր պատգամավորական ժողովն է, որն ընտրվում է 4 տարով: Անդամների 6/7-ը աշխարհիկ են, իսկ 1/7-ը՝ հոգեւորական: Պատգամավորական ժողովն իր կազմից 2 տարով ընտրում է 7-11 անդամից բաղկացած թեմական խորհուրդ, որը թեմի բարձրագույն գործադիր մարմինն է: Ներկայումս (1999) թեմական խորհրդի ատենապետն է դոկտ. Լեւոն Դավթյանը, փոխատենապետը՝ Ռուբիկ Կարապետյանը:

Թեմի տարածքում կա շուրջ 100 եկեղեցի: Կանգուն են 20-ը, որոնցից 8-ը՝ Թեիրանում: Հնագույնները՝ Ս. Բարդուղիմեոս, Ս. Գեուրգ, Ս. Աստվածածին, Ս. Արագմանջաց, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Սարգիս, Ս. Մինաս, Ս. Վարդանանց, Ս. Թեդեոս Բարդուղիմեոս (1768) եւ Ս. Գեուրգ եկեղեցիներն են:

(Շար. 7)

Մարտի հայկական տոները

Էդ. Գերմանիկ

ԲԱՐԵԿԵՆՂԱՆԻ ՏՈՆԸ

Ս. Սարգսի տոնից սկսած մինչև Մեծ Պատը ընկած ժամանակահատվածը ուրախության օրեր են, տեսնում են մեկից մինչև երկու շաբաթ: Իսկ բուն Բարեկենդանը դա Մեծ Պատի նախընթաց կիրակին է: Իրական կյանքի վայելքերին ոչ մի սահմանափակություն չի դրվում, մարդիկ ազատորեն ուրախանում են, ասում են այն, ինչ մտածում են, եւ ճիշտ են համարում, ուտում են, ինչ լավ է ինչքան կարողանում են:

Այդ օրը առավոտյան սովորաբար պատարագ է մատուցվում եւ բոլորը գնում են եկեղեցի, որից հետո սկսվում են խրախճանքի ու ուրախության հանդիսությունները:

Ըստ հնագույն սովորության, Բարեկենդանի հաջորդ օրը, երկուշաբթի առավոտյան հարազատներն ու բարեկամներն այցելության են գնում միմյանց: Այդ օրերին թոնիրը մշտապես վառ են պահում, տան տարեց կանայք գործի են անցնում, թխում են յուղով գաթա, հալվա, տղամարդիկ մորթում են գառ, ոչխար, երինգ, հավ, սագ, հնդկահավ: Սեղանը մի քանի անգամ լցվում է տեսակ-տեսակ ուտեստեղեններով, առատորեն ուտում են մսեղեն կերակուրներ, իսկ ամբողջ երկրորդ շաբաթվա ընթացքում «սուփրեն» ընդանրապես չի հավաքվում: Տան տիկիները բաց են անում իրենց մառանների դռները, պուտուկներն կարասները, բոլոր պատվական ուտեստեղենները սեղանին են դրվում: Բարեկենդանը, ինչպես ժողովուրդն է անվանում, «փորի» ուրախության օրեր են:

Կրոնականներին նույնպես որոշ արտոնություններ են տրվում, թերեւս այդ է պատճառը, որ այդ օրերը հնում կոչվում են Աբեղաթող:

Բացի կերուխումից, նշանակալից է Հայաստանում տիրապետող այն սովորությունը, որ բոլոր մարդիկ հավասար իրավունքներ են ստանում, իշխում է իսկական խոսքի ազատություն, վերանում է դիրքի տարբերությունը եւ կարելուր նշանակություն է ստանում քննադատական խոսքը՝ համենված հունորով, թեւածում են կատակները, սրամիտ երկխոսությունները, որոնք ժողովրդի մեջ ստացել են «լեզվակոխի» անվանումը: Մասնավորապես, քննադատվում են մեծավորների բացասական արարքները, ծաղր ու ծանակի են ենթարկվում այն թերությունները, որոնք վնասել են առանձին անհատների, ոտնահարել են նրանց շահերը, մարդիկ հասկացնել են տալիս մեծատրների անարդարացի, շահամոլ արարքները, կատակի միջոցով հիշեցնում են իրենց կրած անտեղի վիրավորանքներն ու նվաստացումները: Այդ օրերը ոչ միայն մարմնի. այլ նաեւ հոգվի, խոսքի, մտքի ազատության տոն է, սակայն այդ ամենը կատարվում է առանց քինանդությունից, շրջապատին ցավ ու դառնություն պատճառելու միտումով:

Եվրոպական երկրներում կարճավառ, դիմակահանդեսը նույն նշանակությունն ունեն: Որոշ վայրերում դիմակահանդեսը տոնում են շատ շքեղ, հատուկ պատրաստություններ են տեսնում, կարում են կարճավառային հագուստներ, կազմակերպում են խաղեր, գեղեցկության, ուժի մրցույթներ եւ այլն: Հայաստանում Բարեկենդանի օրերն անցնում էին ավելի բովանդակալից, որոշակի ուղղվածությամբ նպատակասլացությամբ: Դա ոչ միայն ուրախության ու խրախճանքի տոն է այլ նաեւ ի մի են բերվում ամբողջ տարվա դրական ու բացասական արդյունքների եւ ծիծաղի ու ծաղրի, հունորի միջոցով, քննադատվում են թերություններն ու

սխալները: Այդ նույնը կատարվում է ոչ միայն ժողովրդի, այլ նաեւ եկեղեցականների շրջանում: Կարծես մոռացության են տրվում կրոնական աստիճանների միջեւ եղած տարբերությունները՝ սարկավագ, աբեղա, վարդապետ եւ եպիսկոպոս, բոլորը հավասար են դառնում եւ բոլորը միասին, իրար հետ մասնակցում են եւ գլխավորում ժողովրդական խրախճանքներն ու ուրախությունները: Տնային խրախճանքներից, կերուխումից հետո սկսվում են բացօթյա գիշերային զբոսանքները: Մարդիկ հավաքվում են գյուղական հրապարակներում, որտեղ ծայերի մեծամասնությամբ ընտրվում է Բարեկենդանի հանդիսությունը ղեկավարող, լայն ժողովրդականություն վայելող, սրամիտ ու հեղինակավոր թափորապետ: Նրան նստեցնում են «թագավորական» գահավորակին, որը պատգարակի ձեւ ունի, գլխին դնում են եպիսկոպոսական թղթ խոյը՝ չաթալ թագը, ձեռքին բռնած ունի խոտից հյուսված գավազան, հագուստը նույնպես գույնզգույն թղթերից է կարված: Պատգարակը տանում են տիրացուների հագուստով չորս խրոխտ երիտասարդներ: Այդպես թափորը շարժվում է գյուղի փողոցներում, տեղի են ունենում ծիծաղաշարժ հարց ու պատասխաններ, սրամտությունները, ծափ ու ծիծաղը, թեւածում են օդում: Թափորապետը կատակների ձեւով ծաղրի է ենթարկում այս կամ այն մեծավորի սխալ արարքները, կատակներից ոչ ոք չի վիրավորվում: Քննադատությունից անմաս չի մնում նաեւ թափորապետը, նրան նույնպես ծաղրի են ենթարկում, շատ հաճախ ուրիշի թերությունները վերագրելով նրան՝ «ավել քեզ ասեմ, հարս դու հասկացի» սկզբունքից ելնելով: Այնուհետեւ բացվում է Բարեկենդանի մեծ, ընդհանուր սեղանը, որի հարդարմանը մասնակցում են գյուղի յուրաքանչյուր ընտանիք: Իրենց մառաններից հանում են ամենահամեղ ուտելիքները, առատորեն հոսում է գինին, ընդհանուր սեղանից բոլորը համահավասար վայելում են Բարեկենդանի բարիքները: Երգվում են ժողովրդական խաղիկներ, տեղի են ունենում արտասանություններ, գուռնա թմբուկի նվագակցությամբ կատարվում են մասսայական պարեր: Լուսադեմին բոլորը հեռանում են իրենց տները, որտեղ նույնպես պատրաստված են ճոխ սեղաններ՝ ծանրաբեռնված տեսակտեսակ կերակուրներով:

Երկրորդ շաբաթվա կիրակի գիշերը՝ Բուն Բարեկենդանին, մոտիկ ազգականներն ու բարեկամները հավաքվում են իրար մոտ, ամեն մեկը իր հետ բերում է, ինչ մնացել է տանը, սեղանի վրա ուտելիքների դեզեր են գոյանում: Այդ գիշեր, քնելուց առաջ մարդիկ ճոխ ընթրիքից հետո, ուտում են մարսողական ապուրներ՝ սպաս, մածուն, թան եւ անկողնու մեջ յուրաքանչյուրը խաշած պինդ ձվով փակում է իր բերանը, մաղթելով, որ Ջատկին կրկին ձվով ու բարությանբ բացեն իրենց բերանները: Ահա հենց այդ օրվանից էլ սկսվում է Մեծ Պատը: Ուտելիքների մեջ ոչ մի սահմանափակություն եւ տարբերություն չի չլինում՝ Բարեկենդանի ծիսական կերակուրներն աչքի են ընկնում իրենց հարստությամբ, շքեղությամբ, բազմատեսակությամբ: Գաշտ սեղանին են դնում քերեղան ապուրամաններով, սկզբում ուտում են ապուր, հետո՝ մսեղեն կերակրատեսակներ՝ ոչխարի, տավարի կամ վայրի այծի, եղնիկի, վարագի խորտիկներ, այնուհետեւ մատուցում են տնային կամ որսի թռչունի միս՝ հավ, սագ, հնդկահավ, լոր, կարապ, վայրի բաղ, որից հետո ձուկ կամ ձվեղեն, իսկ վերջու ուտելու արարողությունը փակում են քաղցրավենիքների, թվածաբեղենի, թարմ ու չոր մրգերի միջոցով:

ՄԵԾ ՊԱՅՔ (ՄԵԾ ՊԱՍ)

Մեծ Պահքը բաղկացած է յոթ շաբաթներից եւ տեւում է 48 օր՝ բուն բարեկենդանից մինչեւ Ս. Ջատիկ: Անհօգ ուրախությանը, զվարճախաղերին, անհագուրդ խրախճանքներին, կենցաղային թեթեամտությանը, հասարակական նորմերի ավանդական կարգի խախտումներին փոխարինելու էր գալիս հասարակական ու ընտանեկան հարաբերությունների դարերով մշակված նորմերին վերադառնալու խորհրդանշական շրջանը: Որպէս խորհրդանշական ու անցումային շրջան՝ այն հասարակության կողմից մշակված հոգեւոր արժեքները դրսեւորում էր չափազանցված, խտացված ձեւերով: Դա ինքնամաքրման, ինքնագոհաբերման, ապաշխարհութեան, մաքրակենցաղութեան ու ժուժկալության պահեցողության յոթշաբաթյա շրջանն էր, որ հայտնի էր "Մեծ Պաս" անունով, Մեծ՝ որովհետեւ այն տարեկան պատերից ամենաերկարտեւն էր: Մեծ Պասի հենց առաջին օրը հաշտություն, համերաշխություն սահմանելու օր էր, գծություններն ու թշնամությունները մեղմելու, հասարակության մեջ ներդաշնակ բարեկամական հարաբերությունները վերականգնելու օր: Միջնորդները գործի էին անցնում, հաշտեցնում նույնիսկ թշնամիներին: Ոչ ոք չէր կարող խուսափել այդ սովորույթից, այլապէս կգրկվեր Մեծ Պասի ավարտին հաղորդվելու իրավունքից: Նույն օրը հոգեւոր մաքրությանը ուղեկցում էր առարկայական մաքրության սովորույթը: Բարեկենդանը վերջացել է եւ Մեծ Պասի հենց առաջին օրը ջանում էին վերացնել Բարեկենդանյան զեխության հետքերը՝ վճարաւ ամանեղենը, վճար անել, լողանալ, մաքրել տան ու բակի բոլոր անկյունները եւ այդպէս մաքուր դիմավորել ինքնազսպման շրջանը: Այլեւս պաս էր, արգելքի տակ էին կենդանական ծագում ունեցող բոլոր ուտելիքները, դրանց փոխարինելու էին գալիս բանջարեղենը, ձեթը: Մեծ Պասի « օրերի ընթացքում պիտի ուտեին լոբուց, ոսպ ու սիսեռից, կարտովիլից ու գետնախնձորից, սոխ ու սխտորից, ձավարեղենից, զանազան թուր դրած ու չորացրած կանաչեղեններից, բայց հատկապէս՝ հռչակավոր մոխտի-պուրը: Մոխտիը տարբեր տեղերում տարբեր կերպ էին պատրաստում, բայց այն Մեծ Պասի ուղեկիցը, խորհրդանշական ճաշատեսակն էր ամեն տեղ: Շատ վայրերում կրկնուր լավ եռացնելուց հետո սառեցնում էին, շաղախում թթխմորով եւ լցնում կարասը թողնելով, որ այն խմորվելով թփի: Ոմանք էլ թթխմորով շաղախելուց հետո գնդեր էին շինում ու չորացնում եւ անհրաժեշտության դեպքում ջրով բացում էին այդ գնդերը: Համայրա ամենուր այս ծիսական ճաշատեսակին ուղեկցում էին որոշակի ծեսեր: Օրինակ, շատերը հետեւում էին, որ պասի ընթացքում մոխտիը ուտելու եւ հատկապէս պատրաստելու թիվը զույգ չլինի, այլ անպայման՝ կենտ: Ուրիշները մոխտիը պատրաստելուց եւ կարասը լցնելուց հետո կանչում էին երեխաներին, որ նրանք կարասի մոտ մի քանի անգամ էշի նման խռանչեն, իբրեւ մոխտիի շուտ թփելու համար: Իսկ կարնոհայերը հատուկ Մոխտիապուրի պար ունեին, որ պարում էին միայն Մեծ Պասի առաջին օրը: Մոխտիապուրի պարը պարել են բացառապէս տղամարդիկ, ընդ որում՝ համայնքի, գյուղի բոլոր տղամարդիկ, հիմնականում չափահասներից մինչեւ ծերերը, պարել են՝ մոխտիապուրին նվիրված երգը երգելով, առանց նվագի: Մոխտիապուրի պարերով գովերգել են Մեծ Պասը, նրա հիմնական ճաշատեսակը՝ մոխտիը: Պարը կատարել են խումբ-խումբ, կլոր-փակ շրջանով: Յուրաքանչյուր խումբը կատարել է յոթ պտույտ եւ հեռացել պարատեղից տեղը զիջելով հաջորդ խմբին:

Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ, Գ. ՎԱՏԱՆՅԱՆ

36. Ես որոնում եմ մարդու քաղաքակրթված առաջին քայլերը, որոնք եղել են նրա մարդկայանացման եւ ընդհանրապէս մարդասիրության առաջին մղումը: Հենց այդ որոնումներն էլ ինձ բերեցին Հայաստան: Եվ Հայաստանում ես որոնում էի մարդկային մտքի սաղմը... Հիմա, կարծում եմ, հասկանալի կլինի, թե ի սկզբանէ ինչ եմ որոնել անտիկ Հայաստանում, ինչ եմ գտել եւ ինչու մինչեւ օրս չեմ բաժանվում նրանից: Հայաստանն ընդարձակել է իմ հորիզոնը եւ խորացրել միտքս: Իսկ դա արդեն ահագին բան է:

37. Հայաստանը գտել եմ ավելի ուշ, քան Հունաստանը: Եվ փառք աստծու, որ հասցրել եմ գտնել այս կյանքում: Դա մեծ երջանկություն է: Եվ Հայաստանում իմ գտածը եղել է ոչ պակաս, քան անտիկ Հունաստանում: Եթէ Հայաստանը մեծ Նարեկացուց բացի ոչինչ չունենար, միեւնոյն է, այդ էլ բավական կլիներ համամարդկային մշակույթի մեջ վիթխարի դեր խաղալու համար: Նարեկացուց բացի Հայաստանը, սակայն, իր փառավոր անցյալում այնքան շատ բան ունի, որ դյուրին չէ համաշխարհային մշակույթին նրա բերած ավանդը չափուկչիռ անել: Կարծում եմ, որ կատարյալ դժբախտություն է եղել այն հանգամանքը, երբ մշակույթային գնահատման բոլոր հաշվարկները սկսել են լատինահունականի եւ եվրոպականի իդեալացումից: Իմ սերունդը հենց այդպէս էլ ուսանել է աշակերտական տարիներին: Եվրոպականի այդ ֆենոմենը մեզ հիպոստացրել ու երկար ժամանակ պահել էր խոր քնի մեջ: Գիտատեսխնկական հեղափոխությունը, մեր մտածողության մեջ կատարված հարաբերականության ճշտումը, ատոմային ֆիզիկայի բուռն զարգացումը եւ Իկարուսի ժառանգի՝ մարդու կողմից կատարվող տիեզերական նվաճումները մեր միտքն արթնացրին ընդհանրապէս եւ մասնավոր առմամբ: Այո՛, մարդկային միտքն սկսեց շարժվել: Եվ հանկարծ մենք գտանք այն, ինչի մասին ունեինք բավականին աղոտ պատկերացում: Այժմ մեր առաջ իր գաղտնիքը բացահայտում է Մշակույթի Ատլանտիդան, որը քողարկված է եղել մեր աչքերից: Մտքի, մշակույթի ու մարդկային գործունեության այդ Ատլանտիդայում կենտրոնական տեղերից մեկը պատկանում է անտիկ Հայաստանին: Որքան խորացել են հայկական այդ Ատլանտիդայի մեջ, այնքան ավելի արագ է խփել իմ սիրտը: Եվ, իհարկե, բերկրանքից... Ես այնտեղ մարդկային ստեղծարար գործունեության այնպիսի շերտեր եմ գտել, որ շունչս բռնվել է: Ամենափորձառու "հանքափորի" համար նույնիսկ դյուրին չէ պեղել պատմության, գրչության, մտքի, պոեզիայի, ծեսերի, ճարտարապետության եւ ընդհանրապէս այն ամենի հզոր շերտերը, որոնք կոչվում են **Գեղեցիկ**: Բոլոր այդ հայտնագործությունները չեն զիջում այն **Գեղեցիկին**, որ ինձ հաջողվել է գտնել աշխարհում: Բացի այդ, անհրաժեշտ է նաեւ ասել, որ բոլոր այդ պատմական եւ մշակույթային շերտերին հատկանշական են ինքնատիպությունը, անկրկնելիությունը, ազգային ու գուտ հայկական երանգը... Այստեղ կան այնպիսի յուրահատուկ երեւոյթներ, որպիսիք չեն գտնի աշխարհում, օրինակ՝ խաչքարերը եւ ազգային ուրիշ մասունքներ: Հայերը ոչ մի ընդհանուր բան չեն ունեցել մշակույթային էպիգոնության ետ, նրանց միշտ խորթ է եղել օտար մշակույթի պատճենահանումը: Հայ ժողովուրդը

ստեղծել է միայն բնօրինակներ: Լա արարիչ ժողովուրդ է:

Ղայկական օրացույցի/

38. Հայաստանը գալիս է պատմության այնպիսի խորքերից, որոնք համեմատելի են միայն Արարատի բարձրության հետ: Ինձ համար Հայաստանը կրկնակի Արարատ է: Մեկը գտնվում է պատմական անցյալի խորքերում, մյուսը հասնում է աստղերին: Ահա թե ինչ է Հայաստանը: Խոշոր, ես կասեի՝ կոթողային մի գանգված, քաղաքակրթության ապառաժ: Ինձ զմայլել է այն Արարատը, որ տեսել եմ հայոց պատմության խորքերում, եւ այն Արարատը, ուր տեսել եմ աստղերով պսակված: Թե այնտեղ ստորգետնյա Արարատը, թե այստեղ՝ վերգետնյա Արարատը, այնքան աստղեր ունի, որ նույնիսկ հանրահռչակ Բյուրականը չէր կարող հաշվել: Հայկական ամբողջ հնագույն մշակույթը եւ ամբողջ նորագույն մշակույթը կատարյալ մի տիեզերք է: Իսկ այդ մշակույթի արարիչներն ասես տարբեր մեծության աստղեր լինեն: Բայց գլխավորը նրանց քանակությունն է... Եվ բոլորն էլ պայծառ են լուսավորում. հայ ժողովրդի այդ տիեզերքում մարած աստղեր չկան: Ես սիրեցի այդ խոր եւ բարձր Արարատը:

39. Ինձ դուր է գալիս հայ ժողովրդի պատմական լավատեսությունը, աշխատասիրությունը եւ մարդկանց համառությունը: Նման բնավորություն այստեղ ձեռք է բերվել այնպիսի պայմաններում, երբ մարդը ստիպված է լինում մի կաթիլ ջուր աղերսել աստծուց, ինչպես երկնային մամանա, եւ ուր հացն անգամ ստիպված են լինում քարից քամել: Եվ, այսուհանդերձ տեսնելով ամեն մի դժվարություն, մարդիկ այստեղ ուրախ եւ զվարթ են, ինչպես հավքերը գարնանը: Ի՞նչ կենսախիճ են այստեղ պարերը: Ինչքա՞ն ուրախ են շուրջպարերը: Ինչքա՞ն բարձրահիշյուն են երգերը: Ուղղակի հրաշք: Հայկական սրտերը բաց են: Ես նույնիսկ կասեի՝ լայնորեն բացված են: Այստեղ շատ դյուրին է մարդկանց հետ շփումը: Այդ իսկ պատճառով ես շատ կարճ ժամանակում այստեղ այդքան շատ ծանոթներ գտա, որոնք դարձան իմ հարազատները: Ես այստեղ գտա իմ երկրորդ տունը: Դրանից ավելին մի կյանքում հարկավոր չէ...

40. Հայաստանի հետ շփումը ինձ համար ավելին է, քան բարեկամությունը: Դա իմ ուշացած սերն է: Սակայն մի տարբերությամբ այն ծնունդ է առել դեռ վաղուց, իմ ծաղկող երիտասարդության տարիներին: Այդ իսկ պատճառով էլ այն այդքան ուժեղ է, ինչպես եւ առաջին սերը:

ԷՂՈՒՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ
/“Իմ կրկնակի Արարատը” գրքի, Երեւան, 1984, ներածական խոսքից/

41. Հայ ժողովուրդը, հավատարիմ մնալով իր ծագմանն ու իին ավանդությունների, միշտ էլ լավ է պահպանել իր պատմական ինքնությունը ու սեփական ազգային բնավորությունը, առանց խառնվելու այլ ժողովուրդների հետ: Սակայն նա երբեք չի պարփակվել իր մեջ, առանձնացման անպատու դիրք ընդունելով, այլ, ընդհակառակն, հենց իր պատմության սկզբից մշակութային լայն կապեր է ունեցել քաղաքակրթությունների հետ: Հայաստանի պատմությունը համարյա միշտ ընթացել է Արեւելքի ու Արեւմուտքի միջու, եւ նա ապացուցել է, այս երկու աշխարհները հակադրության ու հակասության մեջ չեն, այլ իրար լրացնում են եւ կարող են ամբողջանալ ու ներդաշնակվել:

ՁԻՆԱԿԱՐԼՈ ԲՈԼՈՆԻԵՁԻ /ծնվել է 1923/ Իտալացի հայազետ

42. Մերձավոր Արեւելքի հնագույն ժողովուրդներից է հայ ժողովուրդը: Իր պետությունը հիշատակված է ամենահին աշխարհագրական քարտեզի վրա, որը այսօր պահպանվում է Բրիտանական թանգարանում: Այդ քարտեզը պատրաստվել է Բաբելոնում՝ քսանհինգ դար առաջ: Այս ժողովուրդը, որը գտնվում է արեւելքի եւ արեւմուտքի խաչմերուկի տարածքում, ստիպված եղավ իր ազգային ոգին պաշտպանելու համար դարավոր պատերազմներ մղել Բաբելոնի, Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի, Բյուզանդիայի, վերջապես թուրք-մոնղոլների դեմ: Եթե պատերազմները մի կողմից տկարացրել, կտորել են հայ ժողովրդին, այլ առնուով առաջացրել են նրա համառ սերը հարեհիքի, կրոնի ու ազգային յուրահատկությունների հանդեպ:


43. Արիական մշակույթին, քաղաքակրթությանը մատուցած Հայ Ազգի ծառայությունների ավանդների մասին հարկ պիտի լիներ մեծաթիվ հատորների շարք գրել: Հիասքանչ հայոց լեզուն, զարմանալի գործիք դասական բոլոր մատյանների թարգմանությունների, հիանալիորեն մշակված, արտահայտիչն է հայի մեծաշունչ ոգու, նման իր ճարտարապետությանը, եզակի ու այնքան հարուստ, որ Լեոնարդոյից խլեց հիացունիքի բացականչություններ, երկրի վճիտ ու լուսավոր բնության միջավայրում արտահայտեց տանջված մեծ մի ժողովրդի խորինաց իմաստությունը:

44. Հայերի ցեղային բնույթը, իրենց պատկանելիություն Արիա ցեղին, այն է՝ “կոնկուիստատորների” ցեղին, բացատրում է այդ գաղտնիքը: Մաքուր արյունը չի դավաճանում:

45. Հայ գրականությունը պետք չունի լուսաբանությունների: Այդ գրականությունը ինքնովի է հանձնարարվում այլոց հիացունքին, այն էլ իր երկրի քանակով եւ քնարական ստեղծագործությունների միջոցով: Հայ գրականության ասպարեզում գերիշխում են երկու հիմնական ուղղություն. Եթե մի կողմից Հայաստանը կապված է Արեւելքին, ապա մի այլ ուղղությամբ այն առնչվում է նույնքան կարեւորություն ունեցող արեւմտյան աշխարհին...

Գալով մեր ժամանակաշրջանին՝ հայ գրականությունը նախանձելու ոչինչ չունի այլ երկրների համեմատությամբ, ու հարկ է ասել, որ Եվրոպա կամ Ամերիկա գաղթած հայ գրողները շարունակել են իրենց բնորոշ ոսկեգրիչ ավանդները, հաճախ արտահայտվել են հյուրընկալ երկրի լեզվով ու հասել գրական արժեքների բարձրագույն մակարդակին: Դրանցից եւ Ուլիյան Սարոյանը, Մայքլ Առլենը /Տիգրան Կույունճյանը/, Մամուլյանը, Իտալիայում Վիտտորիա Աղանուրը, Ֆրանսիայում Հանրի Թրուայան:

ԼԱՌՈՐ ՄԱՆԱՐԴԻ
Իտալացի հայազետ
/“Գրքերի աշխարհ”, 1991, թիվ 275/



Մխիթար Գոշ

(12-դ.)

11. Ձկները եւ Նրանց Թագաւորը
 Ձկները մեղադրեցին իրենց թագաւորից.
 -Ինչո՞ւ էք ուտում ձեզնից մանր ձկներին:
 Հանարձակիութիւն ստանալով ձկները
 պատասխանում են.
 -Որովհետեւ քեզնից սովորեցինք. շատերը եկան
 քեզ երկրպագելու, եւ կլանելով քեզ կերակուր
 դաձրիր:
 Ըստ այդմ իրենք աւելի հանդուդն եղան:
 Առակս հանդիմանում է, որ ոչ թէ խօսքով, այլ
 գործով պէտք է խրատող լինել:

12. Նոխազն Ու Գայլը
 Նոխազը այծերի հետ մտաւ քարանձաւ:
 Տեսնելով նրանց, գայլը գալիս, հարցնում է.
 -Ի՞նչ էք անում այդտեղ:
 Եւ ասում են.
 -Քառասուն օր ճգնելու ենք այստեղ:
 Հաւատալով, գայլը գնաց: Իսկ այծերը իջնելով
 գնացին խաղաղութեամբ:
 Առակս ցոյց է տալիս, թէ ինչպէս կարելի է
 ստուրթեամբ ազատել վտանգից, որ պարսաւելի է:

13. Առիւծը եւ Կենդանիները

Առիւծը, կոտրելով ոտքը, տրտմջում էր բոլոր
 կենդանիների վրայ.
 -Իմ հպատակներն էք, քանի որ կենդանիների
 իշխանն եմ ես, բայց ինչո՞ւ այժմ ընծայ չէք բերում, որ
 առողջանում:
 Պատասխանում են.
 -Դու երբէք չպաշտպանեցիր մեզ ոչ արջից, ոչ
 գայլից եւ ոչ էլ ուրիշ գազանից: Նոյնիսկ դու ինքդ մեզ
 չխնայեցիր: Մենք աստծուն պիտի ընծայ մատուցենք,
 որ այդպիսի չարիքի մեջ ես ընկել:
 Առակիս միտքը յայտնի է. աշխարհիկ եւ
 եկեղեցական չար առաջնորդները տանջելով
 հպատակներին, չեն պահպանում նրանց ուրիշների
 վտանգից:

14. Ծովի Գորտերը

Ծովի գորտերը խորհուրդ անելով ասացին.
 -Ինչո՞ւ ենք տռզած փորերով ու դեղնած մաշկով
 խեղդում ջրերում, դուրս գանք ցամաք ու ապրենք
 ուրիշների պէս:
 Ծերերից մէկն ասում է.
 -Հայրս պատեր է տւել ինձ, որ ձովի ապաստանը
 չթողնեմ, որովհետեւ բնութեամբ երկչոտ ենք, զուցէ
 դուրս գանք ու սարսափելով ետ դառնանք եւ ցոյց
 տանք մեր երկչոտութիւնը:
 Չլսեցին խորհուրդը եւ դուրս ելան, բայց
 ոտնաձայն լսելով՝ փախան ու կրկին խորատուզեցին
 ծովը:
 Առակիս մեջ իմաստութիւն կայ. նախ պէտք է
 սեփական կարողութիւնը ճանաչել եւ ապա տեղը կամ
 գործը փոխել:

15. Ոչխարներն Ու Այծերը

Հոտն ընթանալիս՝ ոչխարների դմակները շարժում
 էին: Այծերը նախանձից դողած սկսեցին բամբասել
 նրանց, ասելով.
 -Ինչո՞ւ մեզ նման պարկեշտաբար չէք քայլում:

Առակս ուղղած է ընդդէմ նախանձոտների.
 կեսնելով ուրիշների արժանիքը, բամբասում են, իսկ
 իրենց, որ զուրկ են դրանից, համարում են պարկեշտ:

ՎԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

- Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է:
- Աշխարհն աշխատավորինն է:
- Աշխարհն արոտ մենք մեքը կարոտ:
- Աչք տես, բերնե կարոտ:
- Աչքը շինելու փոխարեն հոնքն էլ հանեցին:
- Աչքի տեսածը հաստատ է, քան ականջի լսածը:
- Աչքից էլ եմ պոծել, աչքացավից էլ:
- Աչքն ինչքան բարձրանա, հոնքից վերեւ չի
բարձրանա:
- Ապրել կա դանակ է, ապրել կա դմակ է:
- Աջով տուր, որ ձախով վերցնես:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

- Գայլի հետ դմակ է ուտում, հովվի հետ լաց է լինում:
- Գայլին ուզում էին կախել.- բաց թողեք ինձ,- ասաց,-
նախիրը գնաց:
- Գայլից հովիվ դուրս չի գա:
- Գայլն ընկավ ոչխարի սուրուն, վա~յ մեկի տիրոջը:
- Գնչուհին ցորենմաղը դրեց երեսին ու գնչուհուն
ասաց,- «Ինչպե՞ս ես ինձ տեսնում». «Ինչպէս դու ինձ»
պատասխանեց գնչուհին:
- Գողն աղմկոտ շուկա է սիրում:
- Գորգիդ չափով ոտքերդ պարզիր:
- Գրչի արածը սուրն էլ չի անի:
- Դա սիսեռ է, ամեն ճաշի մեջ կընկնի:

-Դանդաղ գնաս, շատ կգնաս:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

-Ինչի՞ համար են ձեզ դատել:
 Պատկերացնում էք, մի անգամ պարզւեց, որ
 պետութիւնը թողարկում է նոյնատիպ դրամանիչ,
 ինչպիսի ես:

Մեքենան հարածելով հետիոտին կոտորում է նրա
 ոտքը:

Որպէս հատուցում դատարանում հետիոտը
 պահանջում է մէկ միլիոն դրամ:

-Չեզ երեւի թւում է, որ ես միլիոնատե՞ր եմ:
 -Իսկ ձեզ ի՞նչ է թւում, ես քառասուն ոտանի եմ:

Դատապարտեալը
 -Խնդրում եմ հետաձգել դատը, քանի որ իմ
 դատապաշտպանը դեռ չի եկել:

Դատաւորը
 -Ոտիկանը ձեզ ձերբակալել է այն պահին, երբ ձեր
 ձեռքը արդէն ուրիշի գրպանում էր: Դրան ինչ կարող է
 անելացնել դատապաշտպանը:

-Եիշտ ասած, ինձ նոյնպէս դա է հետաքրքրում:

-Շարքային, դուք այսօր սափրե՞լ էք:
 -Այո՛:

-Յաջորդ անգամ սահմանափակվող սրիչի մասին կը կանգնեք:

Գնդապետը գնում է ծառայողական մեքենայով: Դիմացը, ցեխերի մեջ բեռնատար մեքենա է քաղված:

Ոչ մի հնար չկայ նրան անցնելու:

Ստիպված գնդապետը իր վարորդի հետ իջնում են եւ սկսում հրել մեքենան: Երկար չարչարելուց յետոյ մեքենան դուրս է գալիս ցեխի: Քրտինքի մեջ կորած գնդապետը դիմում է բեռնատարի վարորդին:

-Այո,- բաւականին ծանր է քո մեքենան:

-Իհարկէ ծանր է,- ասում է վարորդը,- չէ որ մեքենայում քսան «դեմբել» են նստած:

2- Արդեօք գիտե՞ք

Եթէ լոկիկի պահածոների (տոմատ- մածուկ, պիւրէ, թթու դրած) բանկաներից կափարիչները թռել են, անհրաժեշտ է պարունակութիւնը լցնել կերակրակաթսայի մեջ, լաւ եփել, աւելացնել աղ (պարունակութեան 10% -ի չափով), վերալցնել մաքուր բանկաները եւ նորից խցանել:

Եթէ մուրաբայի եփելու ժամանակ աւելացի մի քիչ լիճուհի (կիտրոնի) հիւթ, նա չի շաքարակալի:

Որպէսզի կիսել մակերէնոյթին թաղանթ չառաջանայ, անհրաժեշտ է նրա վրայ բարակ թաղանթով շաքարաւազ ցանել:

3.ՇԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. ՄԻ ՔԱՂԱՔ

Հայաստանի հանրապետութիւնում կայ մի քաղաք, որի բնակիչները սրամիտ ու կատակասեր մարդիկ են, հին սովորութիւններին հետեւող, օժտած հայկական հիւրասիրութեամբ: Այդ քաղաքի անունը գտնելու համար եթէ... անպ, թեր, ...կարել, զուր, Մանել, ... գահ, ... այծ, ...միս, եւ ...պար բառերի առաջ աւելացնենք մէկական տառերը ձեզ ցոյց կտան որոնելի քաղաքի անունը:

Այդ ո՞ր քաղաքն է:

2. ՄՊԻՏԱԿ ԱԾՈՒՄ

Աշակերտը աշխարհագրութեան դասին գետերի տնտեսական նշանակութեան մասին խոսելիս ասաց.

- Հայկական հանրապետութեան դետը

հարուստ են «սպիտակ ածուխով»:

- Ի՞նչ բան է «սպիտակ ածուխը»- հարցնում է դասատուն:

- Տուրն է,- պատասխանում է աշակերտը:

- Եթէ դու մի բաժակ ջուր խմես, մենք կարող ենք ասել, որ դու «սպիտակ ածուխ» խմեցիր:

Աշակերտը մի բոպէ մտածելուց յետոյ ուսուցչի հարցին պատասխանում է ճիշտ:

Ո՞րն է ճիշտ պատասխանը:

Պատասխաններ

1. Մի քաղաք- Լ-անպ, Ե-թեր, Կ-կարել, Ի-զուր, Կ-մանել, ա- գահ, կ-այծ, ա- միս, Կ-պար=ԼԵՆԻՆԱԿԱՆ:

2. Սպիտակ ածուխ- Ջրի ուժը կոչւում է «սպիտակ ածուխ»:

Առողջապահական

ԱՌԱՒԵԼ ՏԱՐԱԾԻԱԾ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԴԵՂԱԲՈՅՍԵՐՈՎ

ՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ

Վարակիչ հիւանդութիւն է: Հեղինակի անունով կոչւում է Բոսնիայի հիւանդութիւն: Ունի Ա եւ Բ ձեւերը: Ա ձեւի ժամանակ վարակւում են ուղղակի շփումից, իսկ Բ-ի ժամանակ հիւանդութեան հարուցիչն անմիջապէս անցնում է արեան մեջ: Կլինիկոն աւելի ծանր համարւում է Բ ձեւը:

Հիւանդութեան ժամանակ ախտահարւում է լեարդը, օրգանիզմը ենթարկւում է ինքնաթունաւորման, հիւանդը դեղնում է:

Բուժումը: Խստորէն պահպանել անկողնային ռեժիմ եւ սահմանել դիէտա հիմնականում հարուստ ածխաջրատներով եւ աղքատ ճարպերով, խորհուրդ է տրւում օրայ ընթացքում օգտագործել 3 լիտրի հասնող մրգանիւթեր եւ հանքային ջրեր:

1. Հիւանդութեան սկզբնական շրջանում խորհուրդ է տրւում օգտագործել դեղաբոյսերի հետեւեալ հաւաքը.

Անթառամ (ծաղիկներ)

20 գ

Հազարատերեւուկ (վերգետնեայ մաս)

20 գ

Օշինդր դառը (վերգետնեայ մաս)

20 գ

Ռազիանա սովորական (պտուղներ)

20 գ

Անանուխ (տերեւներ)

20 գ

Պատրաստել ջրաթուրմ, խմել 1/2 բաժակ, օրական 4 անգամ, ուտելուց 15 րոպէ առաջ:

II. Հիւանդութեան հետագայ ընթացքի համար խորհուրդ է տրւում դեղաբոյսերի ներքոյիշեալ հաւաքի օգտագործումը.

Եղերդակ սովորական (արմատ)

20 գ

մաս) Զիաձէտ դաշտային (վերգետնեայ

20 գ

Հազարատերեւուկ (վերգետնեայ մաս)

20 գ

Սրոհունդ (վերգետնեայ մաս)

20 գ

Պատրաստել ջրաթուրմ 2 թէյի զոյալ հունքով: Խմել առաւօտեան եւ երեկոյեան, մէկ բաժակ: Խորհուրդ է տրւում միառժամանակ օգտագործել մասուրի թէյ, օրայ ընթացքում մէկ բաժակ:

Հիւանդութեան վերականգնման շրջանում օգտագործել բանջարեղէնային հիւթեր (գազարի, բազուկի, կարտոֆիլի): Այն հարկաւոր է նոսրացնել 1:4 յարաբերութեամբ: Խմել 1/3 բաժակ աստիճանաբար աւելացնելով քանակը:

